



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

89199-19

4n-73

2



28.08.2012

73.269

891-99-192

Փ-73

պ.

ՀՐԱՏ ԲԻԽՏԱՓՈՐԵԱՆԻ



1906  
4505

ՓՆՋԻԿ ԵՐԳԱՐԱՆ

Ս.-ՊԵՏԵՐՈՒՆԻՐԳ  
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1906

ԻՄ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԿՆՈՋՍՄ

ԻՍԿՈՒՂԻ ԳՐԻՍՏԱՓՈՐԵԱԼԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԿՆՈՒԻՐԵՄ



Հրատմար. 1904

Հանդեսը ի Տէր 1904 թ. դեկտեմբեր 28.  
Տփիսիս:


„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ пер. 4.

Իսկուհի՛.

Դու, որ քո անցաւոր կեանքիդ մէջ երզն ու  
շարականն այնքան ջերմագին սիրեցիր, ընդունիր  
երգերի սոյն հաւաքածու փնջիկը, որ կ'նուիրեմ քո  
մշտագալար լիշատակին: Ուրիշներն երբ այստեղ  
իրենց զուարթ ըոպէներին երգեն սոյն երգերը,  
թող քո հոգին այդտեղ հրճուի լսելով ցնծագին  
խաղերն այն երգերի, որոնք ամփոփուած են քո  
լիշատակին նուիրուած սոյն փնջիկում:

Յարութիւն Բրիտափորեան:

Տփիս, 10 մարտ 1905 թ.



ՆՈՒՆԻՐ ՏԻԿԻՆ ԻՍԿՈՒՅԻ ԳՐԻՍՏԱՓՈՐԵԱՆԻ  
ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թանկ ու հազուադիւտ կին էիր չքնաղ,  
Ամուսնուդ համար մեծ մխիթարանք,  
Համեստ ու պարկեշտ և բարեկենցաղ,  
Սեռակիցներդ պատիւ ու պարծանք:  
Դու Ունձեանների պարտեզի ծաղիկ,  
Հոտաւէտ փայլուն փարեղի շուշան,  
Մեծ բնտանիքում մեծացած աղջիկ՝  
Բարբոյ ու վարբոյ մարուր, պատուական:  
Դու բարձր ուսում ստացած չէիր,  
Շատերից բարձր բնական խելքով,  
Ինքնակրթութեամբ զարգացած էիր,  
Ազգիդ նուիրուած հոգով ու սրտով:  
Ունէիր անբիծ ջերմեռանդ հաւատ,  
Համարեա պաշտող հայ Եկեղեցին,  
Ազնուաշուք կին՝ խոստումիդ հաստատ,  
Դու կարեացդ չափ օգնող խեղճերին:  
Պոչում երբ եղաւ մի մեծ պատուհաս՝  
Ամենին չաչտնի շարդը հայութեան,  
Ամուսնուդ հետը դիմեցիր Կովկաս,  
Տփլիսը եղաւ ձեզ ասպնջական:

Կենակից այրդ համեստ մի գործիչ,  
 Յայտնի մի ոմն և ոչ աննշան՝  
 Պոլսում եղել է հրատարակիչ՝  
 Յարութիւն ազա Քրիստափորեան:  
 Դու չիսուն և ութ տարեկան էիր,  
 Անկոչ սև մահր հիւր եկաւ ծօտդ.  
 Չծաղկած ամուլ բուրաստան էիր.  
 Մութ գիշեր դարձաւ քու առաւօտդ:  
 Մեռար անորդի և անչիշատակ,  
 Հողը զրկեցիր ճարդդ թող տալով,  
 Ծերունի այրդ մնաց միայնակ,  
 Միշտ չիշում է քեզ լալով ողբալով:

Ջիւանի:

Տիիիս.  
 1905 թ. Մարտ.

## Ա. ՏԱՂԵՐ ՈՒ ՍԱՂԹԱՆՔՆԵՐ

ԵՐԳ ԱՂՕԹԱԿԱՆ

'ի դէմս երրորդութեան, նաև իւրարանչիւրոյ  
 դիմի երրորդութեան առանձնակի:

Առաւօտ լուսոյ,  
 Արեգակն արդար,  
 Առ իս լոյս ծագեալ:  
 Բղխումն 'ի Հօրէ,  
 Բղխեալ 'ի հոգոյս,  
 Բան քեզ 'ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,  
 Գանձիդ ծածկելոյ  
 Գտող զիս արալ:

Դուռն ողորմութեան,  
 Դաւանողիս բայց,  
 Դասեց՛ս վերնոցս:

Երբեակ միութիւն,  
 Եղելոց խնամող,  
 Եւ ինձ ողորմեալ:

Զարթի՛ր, Տէր, չօղնել,  
 Զարթո՛ւ զթմբեալս,  
 Զուարթնոց նմանիլ:

Էդ չաչր անակիցքն,  
 Էակից Որդի  
 Է միշտ Սուրբ Հոգի:

Ընկալ զիս, զթամ,  
 Ընկալ, ողորմամ,  
 Ընկալ, մարդասէր:

Թագաւոր փառաց,  
 Թողութեանց առող,  
 Թող ինձ զյանցանս:

Ժողովո՞ղ բարեաց,  
 Ժողովեա՞ւ և զիս,  
 Ժողովս անդրանկայ:

՚ի Բէն, Տէ՛ր, հայցեմ,  
 ՚ի մարդասիրէդ,  
 Ինձ բժշկութիւն:

Լէ՛ր կեանք մեռելոյս,  
 Լոյս խաւարելոյս,  
 Լուծանող ցաւոյս:

Խորհրդոց զիտող,  
 Խաւարիս շնորհեա՞ւ,  
 Խորհուրդ լուսաւոր:

Մնունդ Հօր ծոցոյ,  
 Մածկելոյս ստուերաւ  
 Մաղեա՞ լոյս փառաց:

Կենարար Փրկիչ,  
 Կեցո՞ զմեռեալս,  
 Կանգնեա՞ զզլորեալս,

Հաստեա՞ հաւատով,  
 Հաստատեա՞ յուսով,  
 Հիմնեցո՞ սիրով:

Չայնիւս աղաչեմ,  
 Չեռօքս պաղատիմ,  
 Չիր բարեաց շնորհեա՞ւ:

Ղամբարամբ լուսոյ,  
 Ղեկավար ճարտար,  
 Ղօղեալս ամբացո՞:

Ճառագայթ փառաց,  
 Ճանապարհ ինձ ցոյց,  
 Ճեպել ՚ի յերկինս:

Միածինդ Հօր,  
 Մոյճ զիս յառադաստ  
 Մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք,  
 Յանաղին աւուրն,  
 Յիշեա՞ զիս, Բրիստոս:

Նորոգող հնութեանց,  
 Նորոգեա՞ և զիս,  
 Նորոգ զարդարեա՞ւ:

Շնորհատու բարեաց,  
 Շնորհեա՞ զքաւութիւն,  
 Շնորհեա՞ զթողութիւն:

Ուրախացո՞, Տէ՛ր,  
 Ոգւոյս փրկութեամբ,  
 Ոյր փասն եմ ՚ի սուգ:

Չար ճշակողին,  
 Չար սերմանց նորին  
 Չորացո՛ղ զպատուհն:  
 Պարզեւիչ բարեաց,  
 Պարզեւեա՛ իմոց  
 Պարտեացս թողութիւն:

Ջուր շնորհեա՛ աչացս,  
 Ջերմ հեղուլ արասոր,  
 Զնշեւ զյանցանս:

Ռեւոխնդ քաղցու,  
 Ռամ հոգւոյս արբո՛,  
 Ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս,  
 Սիրով քով ճմլեա՛,  
 Սիրա իմ բարեղէն:

Վասն զթութեան,  
 Վասն ողորմութեան,  
 Վերստին կեցո՛:

Տենչալոյս տեսեամբ,  
 Տուր ինձ չազենար,  
 Տէ՛ր Յիսուս Քրիստոս:  
 Բաբունդ երկնաւոր,  
 Բոտեա՛ զաշակերաս  
 Բամից երկնայնոց:

Յօղ արեան քո, Տէ՛ր,  
 Յօղեա՛ ՚ի հողիս,  
 Յնճացէ անձն իմ:

Իիւծեալս մեղօք,  
 Իիւծեալ աղաչեմ,  
 Իիւսել ինձ բարիս:  
 Փրկի՛չ բոլորից,  
 Փութա՛ զիս փրկել,  
 Փորձութեանց մեղաց:  
 Քաւի՛չ յանցանաց,  
 Քաւեա՛ զօրհնարանս  
 Քեզ երգել զփառս:

Ներսէս Կլայկի:

ԳՍՆԶ ՎՍՍՆ ՆՆԶԵՑԵԼՈՑ

Արարիչ և մարդասէր,  
 Անոխակալ և բարեզութ,  
 Որ դովիտդ ՚ի սրովբէից,  
 Տէր զատաւոր արդարութեան,  
 Ընդ սրբոց առաքելոց,  
 Տէ՛ր, պսակեա՛ զմեր ննչեցեալսն.  
 Ողորմած Տէ՛ր, ողորմեա՛  
 Հոգւոցն մեր ննչեցելոց:  
 Թաքաւոր փառաց Քրիստոս,  
 Որ ժամանեալ զաս ՚ի յերկնից,  
 ՚ի վերայ թևոց հողմոց,  
 Քո հայրենի կերպարանօք,  
 Եւ առնես հրափորձութեամբ  
 Զքննութիւն որդւոց մարդկան.  
 Ողորմած Տէ՛ր, ողորմեա՛  
 Հոգւոցն մեր ննչեցելոց:

'ի վերինն Երուսաղէմ՝  
 'ի բնակարանս հրեշտակաց,  
 Ուր Ենովբ և Եղիաս  
 Կան ձերացեալք աղաւնակերպ  
 'ի դրախտին Եղեմական,  
 Պայծառացեալ արժանապէս.  
 Ողորմած Տէ՛ր, ողորմեա՛  
 Հոգւոցն մեր ննչեցելոց:

ՄԱՂԹԱՆՔ ԱՌԱՍՏՈՒԱԾ

Ո՛վ Տէր Աստուած, լո՛ւր մեր բարբառ,  
 Յուզողեալ սրտէ միշտ վշտահար.  
 Փութա՛ զթա՛ հայոց թշուառ,  
 Մի՛ յօտարաց լիցին աւար:  
 Նայեաց տխուր աւերակաց  
 Մեր հարց անշուք լքեալ շիրմաց:  
 Ա՛խ, հայաստան, մայր ոգազգեաց,  
 'ի բիւր հառաչս կոծէ 'ի լաց:  
 Ուր հայորեար տքնին պանդուխտ,  
 Ո՛հ, ընդ տարվայր բազմակարօտ:  
 Չունին պաշտպան մերձ 'ի կորուստ,  
 'ի վտանգս կրեն հարուածս անգութ:  
 Տո՛ւր շունչ քոյդ հայ որդւոց համայն.  
 'ի չի՞ք դարձցին, վա՛շ, ոսոխք չար,  
 Եւ 'ի կրօն սուրբ հայք, հայաստան  
 Կեցցե՛ն յաւերժ, կեցցե՛ն պայծառ:

Վ. Վ. Մանկունի:

ՉԱՐԱԿԱՆ ԾՆՆԻԵԱՆ

Խորհուրդ մեծ և սքանչելի,  
 Որ յայսմ աւուր յայտնեցաւ,  
 Հովիւք երգեն ընդ հրեշտակս,  
 Տան աւետիս աշխարհի:  
 Ծնաւ նոր արքայ  
 'ի Բէթղեհէմ քաղաքի.  
 Որդիք ծարդկան, օրհնեցէք  
 Զի վասն մեր մտրմնացաւ:  
 Անբաւելին երկնի և երկրի  
 'ի խանձարուրս պատեցաւ,  
 Ոչ մեկնելով 'ի հօրէ՛  
 'ի սուրբ յայրին բազմեցաւ:  
 Այսօր ցնձան երկինք 'ի վերուստ՝  
 Մեծապայծառ աւետօք,  
 Եւ արարածք ամենայն  
 Զգեցան հանդերձ փրկութեան:  
 Այսօր յայրին ընծայեցաւ  
 Քրիստոս Որդին Աստուծոյ,  
 Եւ հրեղինաց բազմութիւնքն  
 Յերկնից յերկիր վայր իջեալ:  
 Այսօր հովուացն տեսեալ  
 Զարդարութեան արեգակն,  
 Եւ ընդ հրեշտակս երգէին  
 Փառք 'ի բարձունս Աստուծոյ:

Տ Ա Ղ Ծ Ն Ն Գ Ե Ա Ն

Այսօր տօն է Ծննդեան, աւետիս,  
 Տեառն մերոյ և յայանութեան, աւետիս:  
 Այսօր արեն արդարութեան, աւետիս,  
 Երեւցաւ 'ի մէջ մարդկան, աւետիս:  
 Այսօր Սուրբ Կոյսն անապական, աւետիս:  
 Ծնաւ երեք զանման Արքայն, աւետիս:  
 Այսօր հրեշտակք չերկնից իջան, աւետիս,  
 Ընդ մեզ օրհնեն զանման Արքայն, աւետիս:  
 Այսօր զժոխքն սարսեցան, աւետիս,  
 Գունդրք դիւաց յոյժ տրամեցան, աւետիս:  
 Այսօր չարքն կարկեցան, աւետիս,  
 Եւ ազամեանքն ուրախացան, աւետիս:  
 Ասող մի պայծառ և պատուական, աւետիս,  
 Երեւցաւ 'ի Հնդստան, աւետիս:  
 Մեծ թագաւորք ժողովեցան, աւետիս,  
 Յոլով դպիրք և շատ իշխան, աւետիս:  
 Մովսէս արի, տես զՍինա, աւետիս,  
 Եւ զմորենին, որ անկէզ կայ, աւետիս:  
 Յնձա՛, ցնձա՛, Դաւիթ արքայ, աւետիս,  
 Հնչեա՛ զքնարն քօ և խաչտա՛, աւետիս:  
 Ահա երեք արքայ եկին, աւետիս,  
 Որ երեքեանքն անուանին, աւետիս,  
 Մելքոն, Գասպար և Բաղդասար, աւետիս,  
 Որք 'ի Սաբայ և յԱրաբայ, աւետիս,  
 Ոսկի, կնդրուկ, զրմուռ նմա, աւետիս,  
 Ունին երեք աղնիւ ընծայ, աւետիս:

ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ԱԶԳԱՅԻՆ

Տէ՛ր, կեցո՛ զհաչս  
 Եւ արա՛ զնոսա պայծառ,  
 Կեցո՛ զհաչս:  
 Զողորմութիւնդ վերին  
 Հանեաց ձօնել նոցին,  
 Զի նովիմք մարթացուք  
 Ապրիլ յաստիս:  
 Ով Տէր մեր, Տէ՛ր, փութա՛,  
 Զազգ մեր համայն փրկեա՛  
 'ի թշնամեաց:  
 Կափօ զաչս նոցուն,  
 Հատ զարմատոյն զբուն  
 Եւ զազգ մեր պատրաստուն  
 Արա՛ հօր:  
 Ի քօ իչեալ տեղի  
 Զաթոռ հայրապետի  
 Մեր հաստատեա՛:  
 Զերկարութիւն կենաց  
 Հօր մեր աստուածազգեաց  
 Ծնորհեա պետին մեր հարց,  
 Որ զմեզ հովուէ:  
 Աջովդ համատարած՝  
 Զազգ մեր արտահալած  
 Փոյթ գումարեա՛

454



Յաշխարհ Արարատեան՝  
Ի վայր մեր ծննդեան,  
Որ այժմ է սեպհական

Օտար ազգաց:

Առաքեալ՝ ի բարձանց  
Զհամակցութիւն կամաց

՝ ի մերազնեայս:

Զոմն՝ ի մէնջ յարո՛

Հովիւ ազգի մերոյ,

Տուր նմա ցուպ հուժկու

Հովուել զմեզ:

Ս. Դ. Թաղիաթեանց:

Բ. ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

ԱՆԻ ՔԱՂԱՔ

Անի քաղաք նստեր՝ կուլայ,

Զը կայ ըսող՝ մի՛ լա, մի՛ լա:

Կ'ըսես քիչ է, թող մնայ՝ լայ:

Ա՛խ, ե՛րբ լսեմ՝ մի՛ լա, մի՛ լա:

Շատ ցաւերով կ'այրիմ, տապիմ,

Զունիմ մէկ մարդ հաւատարիմ,

Որ խղճալոյս դայ՝ մօտենայ,

Հէչ չէ՛՝ ըսէ՛՝ մի՛ լա, մի՛ լա:

Ա՛խ, հայ տղայ, խղճա՛ ինձի,

Տէ՛ս թէ քո Անին ի՞նչպէս է,

Հերիք ես լամ, դու չգիտաս.

Զէ՛ քո Անին ափսոս է:

Ախ ու վախով օրերս անցաւ,

Հալէն աչքերս կուրացաւ,

Որբ մնալն ինձ վիճակեցաւ,

Բաղդս բնաւ զիս մոռացաւ:

Կորուսեր եմ թագաւորներ,

Փողովեր եմ գլխուս քօռ բուեր,

Որբ միշտ կ'երգեն՝ «Անին անցաւ,

Անին անտէր աւերեցաւ»:

Եկար, տեսար. դարձեր՝ կ'երթաս.  
 Լալով կրսես՝ «բարեաւ ծնաս».  
 Աստուած սիրես՝ չըմոռանաս,  
 Մասիս սարին երբ մօտենաս,  
 Ըսէ իմ քաջ Արարատին՝  
 «Նստեր՝ կուլայ քո խեղճ Անին,  
 Կ'քսէ, երբ աւետիք կ'ըրաս,  
 Թէ՛ «իմ Անի՛, հերիք է լաս»:

Ա. Դ. Ե. Վ. Արարատեան.

ԱՌՈՁԻՆ ՏԱՐԵԴԱՐՁ ԱԶԳԱՅԻՆ ՍՍՀՄԱՆԱ-  
 ԴՐՈՒԹԵԱՆ 1861 Թ. ՄԱՅԻՍԻ 24.

Արի՛ք, Հայկազունք, յառաջ ընթանանք,  
 Սահմանադրութեան նոր բարև մ'ալ տանք,  
 Որ ազգն երբ զանի փրկարար կոչեց,  
 Նոր հոգի, նոր կեանք անոր պարգևեց:  
 Եկէ՛ք, բարեկամք, առ բարձրեալն Աստուած  
 Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած.  
 Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
 Ազգն ու սահմանադրութիւն:

Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան  
 Բերին մահն 'ի դուռն Հայոց ազգութեան.  
 Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց  
 Եւ կենաց ուղին մեր առջև հարթեց,

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,  
 Ուր ամեն վայրկեան զսչել պարտ է մեզ՝  
 Կեցցէ՛, կեցցէ՛ և այլն:

Դու ալ, Հայաստան, սիրուն Հայրենիք,  
 Այ այսուհետև մի՛ սգար լռիկ,  
 Զի ալ քու որդիք նոր հողով բերկրեալ՝  
 Զքեզ հարս կ'ուզեն տեսնել զարդարեալ:  
 Այ մի՛ լար, մայրի՛կ, լացդ 'ի պար փոխէ  
 Եւ ձայնիւ քաղցրիկ որդուոցդ հետ երգէ՛  
 Կեցցէ՛, կեցցէ՛ և այլն:

Հայեր, միանանք մեր մօրն հետ, օրհնե՛նք  
 Զանոնք, որ մեզի տուին սուրբ օրէնք.  
 Սահմանադրութեան բարեաց փոխանակ՝  
 Թո՛ղ վարեն ուրախ կեանք մի փառունակ,  
 Թո՛ղ և մեր որդիք հետ անոնց անուան  
 Բիւրաւոր տարի օրհնեն ու կարգան՝  
 Կեցցէ՛, կեցցէ՛ և այլն:

Յ. Գ. Սվանեան:

## ՁԵՆ ԵՐՁԱՆԻԿ

Ո՞ր մահկանացուն այս երկրի վրայ  
 Երջանիկ ժամեր վայելել կրնայ,  
 Եւ ո՞րն է այն վարդ ծլած աշխարհիս,  
 Որ ձեռացդ մէջ իսկոյն չթողմի:  
 Ձե՛ն, չե՛ն երջանիկ, ո՛հ, ժամ սիրանուէր,  
 Որ գգուէ հովիկ զկուսին մազեր:

Թէ մտօք զրկես զերկիր և զերկին,  
 Եւ ամեն զազանիք քեզ մերկանային,  
 Անհնար է քեզ ըլլալ երջանիկ,  
 Այլ դշխեմ բաղդին թշուառ խաղալիք:  
 Ձե՛ն, չե՛ն երջանիկ... և այլն:

Ի զուր դիւցազունք պատերազմական  
 Դաշտերու վրայ կանգնեցին նշան.  
 Հազիւ ստացան չաղթութեան պսակ.  
 Կորդեց ձեռքերնէս զայն մահու հրեշտակ:  
 Ո՛հ, չէ՛ք երջանիկ, ո՛հ, դժբաղդ հայեր,  
 Մինչդեռ հայրենիք չէք մխիթարեր:

Մ. Պէշեկ/Թաշլեան.

## ԱՐՍԻՔՍԻ ԱՐՏԱՍՈՒԳԸ

Մայր - Արաքսի ամերով  
 Քայլամուրր գնում եմ,  
 Հին հին դարուց լիշատակ՝  
 Այեաց մէջը պտրում եմ:  
 Բայց նոքա միշտ յեղեղուկ,  
 Պղտոր ջրով եզերքին՝  
 Դարիւ դարիւ խփելով՝  
 Փախչում էին լալազին:

Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ  
 Պար չե՛ս բռնում մանկական.  
 Դու դեռ ծովը չհասած՝  
 Սզաւար ես ինձ նման:  
 Ինչո՞ւ արցունք ցայտում են՝  
 Քու սէզ հպարտ աչերից.  
 Ինչո՞ւ արագ փախչում ես  
 Այդ հարազատ ամերից:

Մի պղտորիլ յատակդ,  
 Հանլարտ հոսէ խայտալով.  
 Մանկութիւնը քո կարճ է,  
 Եւստ կը հասնիս դէպի ծով:  
 Վարդի թփեր թող բուսնին  
 Քու հիւրընկալ ամի մօտ,  
 Սոխակները նոցա մէջ  
 Երգեն մինչև առաւօտ:

Մշտադալար ուռիներ  
 Սառ ծոցի մէջ քու ջրին,

Ճկուն ոսան ու տերև  
Թող թաց անեն տապ օրին:  
Ափերիդ մօտ երգելու  
Հովիւք թող դան համարձակ,  
Գառն ու ուլր բու վճիտ  
Ջուրը մանեն միշտ արծակ:  
Մէջքը ուռցուց Արաքսը,  
Փրփուր հանեց իւր տակից,  
Ամպի նման գոռալով  
Էսպէս խօսեց յատակից.  
«Խիզախ, անմիտ պատանի,  
Նիրհս ինչո՞ւ դարևոր  
Վրդովում ես, նորոգում  
Իմ ցաւերը բիւրաւոր:  
«Սիրելի մահից չետ  
Ե՛րբ ես տեսել, որ այրին  
Ոտից ցզուխ պճնուի  
Իւր դարդերով թանկագին:  
«Որի՞ համար դարդարուիմ,  
Որի՞ աչքը հրապուրեմ:  
Շատերն՝ ինձ են ատելի  
Շատերին ես օտար եմ:  
«Իմ ազգակից զիժ Կուրը՝  
Թէև այրի ինձ նման՝  
Սարկօրէն տանում է  
Գայթակղիչի կուռ շղթան:  
«Կար ժամանակ, որ ես էլ,  
Շքեղազարդ հարսի պէս,

Հաղար ու բիւր պչրանքով  
Փախչում էի փեղեկս:  
«Յատակս պարզ ու վճիտ,  
Կոհակներս ոլորուն.  
Լուսաբերը մինչև այդ  
Չրիս միջին էր լողում:  
«Ի՞նչս մնաց այն օրից,  
Ո՞ր ջրամօտ գեղերս,  
Ո՞րը իմ շէն քաղաքից,  
Ո՞ր բերկրալի տեղերս:  
«Տուրքը չրի ամեն օր՝  
Իր սուրբ ծոցէն Արարատ  
Մայրախնամ ինձ սնունդ  
Պարգևում է լիառատ:  
«Բայց ես այն սուրբ ջրերով  
Սուրբ-Ակօբի աղբիւրին  
Պիտի ցօղեմ արտօրայքն  
Իմ ատելի օտարին:  
«Կամ կենսատու իմ ջրով,  
Ափերիս մօտ կկգած,  
Իւր նամնձը կատարէ  
Թուրք կամ պարսիկը հոտած:  
«Մինչ իմ որդիք — ո՞վ գիտէ —  
Ծարաւ, նօթի՛, անտէրունչ՝  
Օտար աշխարհ յածում են՝  
Թոյլ ոտքերովի կիսաշունչ:  
«Նեռու, հեռու բշեցի՛:  
Բնիկ ազգը իմ Հայկեան.

Նորա տեղը ինձ տուին  
Ազգ անկրօն, մոլեկան:

«Իոցա՞ համար զարդարեմ  
Իմ հիւրընկալ ափերը,  
Եւ կամ զոցա՞ հրապուրեմ  
Ճպուտ պլշած աչերը:

«Քանի որ իմ զաւակունք  
Այսպէս կու մնան պանդուխտ,  
Ինձ միշտ սգուր կը տեսնէք.  
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ»:

Էլ չխօսեց Արաքսը,  
Յորձանք տուեց ահագին,  
Սղակ օղակ օձի պէս  
Առաջ սողաց մոլեգին:

Ռ. Տ.-Գ. Պատկանեան.

### Գ Ա Ր Ո Ի Ն

Ո՛հ, ինչ անձը և ինչպէս զով  
Առաւօտուց փչես հովիկ,  
Ծաղկանց վրայ զուրգուրալով  
Եւ մազերուն կուսին փափկիկ.

Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,  
Գնա՛ անցի՛ր սրտէս 'ի բաց:

Ո՛հ, ինչ աղու և սրտագին  
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,  
Սիրոյ ժամերն 'ի յանտառին  
Ըզմայլեցան 'ի քո ձայնիկ.

Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց,  
Գնա՛ երգէ՛ սրտէս 'ի բաց:

Ո՛հ, ինչ մրմունջ հանես, վտակ  
Ականակիտ և հանդարտիկ,  
Քու հայելույդ մէջ անապակ  
Նային զիրենք վարդն ու աղջիկ.

Բայց չես վտակ իմ Հայրենեաց,  
Գնա՛ հոսէ՛ սրտէս 'ի բաց:

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց  
Աւերակաց շրջին վրայ,  
Թէպէտ պղտոր վտանին Հայոց  
Նոճիներձև մէջ կը սողայ,

Նոքա հառա՛չք են Հայրենեաց  
Նոքա չերթան սրտէս 'ի բաց:

Մ. Պէշիկիժաշխան.

### Ե Ղ Բ Ա Յ Ր Ե Մ Ք Մ Ե Ք

'ի բիւր ծայնից բնութեան շքեղ  
Թէ երգք թռչին սիրողաբար,  
Մատուեր կուսին ամենագեղ  
Թէ որ զարնեն փափուկ քնար,

Չունին ծայն մի այնքան սիրուն,  
Քան զանձկալի Եղբայր սնուն:

Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեր,  
Որ մրրկաւ էինք դատուած.  
Բաղդին ամեն ոխ չարանենդ

'ի մի համբոյր ցրուին 'ի բաց:  
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն:

Երբ այլևոր Մայրն հայաստան  
Տեսնէ զորդիս իւր ըով է ըով,  
Սրտին խորունկ վերքն դաժան  
Քաղցր արտասուաց բուժին ցօղով:  
Ընդ աստեղօք... և այլն:

Մէկտեղ լացինք մենք 'ի հնում...  
Եկէք դարձեալ յար անբաժան  
Խառնենք զարտօսր և զխնդում,  
Որ բազմաժնունդ ըլլայ մեր ջան:  
Ընդ աստեղօք... և այլն:

Մէկտեղ յողնինք, մէկտեղ ցանենք,  
Մէկտեղ թափին մեր քրտինքներ  
Զհունց բարեաց յերկինս հանենք,  
Որ կեանք առնուն հայոց զաշտեր:  
Ընդ աստեղօք... և այլն:

Մ. Պէշիկիթաշեան.

ԵՐԳ ԱՐՇԱԿԱՅ

Հապս քաղաղունք  
Հայոց զաւակունք,  
Առէ՛ք աղեղունք  
'ի մահ երազունք:  
Անտառք սպասեն,

Կենդանիք սարսեն  
Զինուց 'ի ծայնէն:  
Շեշտակի նետեր  
Թափեցէ՛ք, քաշէ՛ր,  
Յերես անվեհեր:

Վազեմք ուր վտանգ  
Յայս մեր զբոսանք.  
Որսոց արշաւանք  
Մարտից են կրթանք:  
Երթամք գունդ 'ի գունդ  
Յաղեղ և մկունդ,  
Յուսով սրտաթունդ  
Շամփրեմք կենդանիս  
Իբր զթշնամիս  
'ի մեր հայրենիս:

Զի օր մ' ալ նոյնպէս  
Մարտին 'ի հանդէս  
Զարնեմք մահազգեաց  
Զոսոխս հայրենեաց  
Եւ յաղթանակաւ,  
Լցեալ աւարաւ,  
Դառնամք քաջարշաւ,  
Եւ 'ի մեր դափնիք  
Ծափ տան սիրելիք,  
Պանծան հայրենիք:

Խ. Գալֆայեան.

## ԵՐԳ ՀՅՅՐԵՆԻ

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն  
 Յետ դառնաշունչ ձմերայնւոյն  
 Եւ 'ի գաւառն իմ հայրենի  
 Գեղածիծաղ դառնայ գարուն,  
 Մինչ բոյր 'ի բոյր փթթին ծաղկունք  
 Եւ ճռուողեն նորեկ ծիծռունք,  
 'ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ,  
 Ո՛վ ցանկալիդ իմ հայաստան  
 Ոչ չեյուետեան ինձ դաշտավայրք  
 Եւ կամ զուարթ մարդազետինք,  
 Ոչ քան զքեզ չքնաղագեղ  
 Իտալական պայծառ երկինք.  
 չեռի 'ի քէն պանդուխտ գոյով  
 Քոյովդ յար տապիմ անձկով,  
 'ի խանձարուրդ իմոց կենաց,  
 Ո՛վ հայաստան, առնեմ ես դարձ:  
 Գայցեն աւուրք ուր մանկութեան  
 Անկցի տիոցս իմ դեղ դալար,  
 Եւ չինէն խոյս տացեն վայելք  
 Կենաց թեթեւ ի գարշապար.  
 Ուր հէզ Մուսայս մատն 'ի չերեր  
 Մոռանայցէ երգել զսեր,  
 Զնինչ 'ի ծոցդ առնում յայնժամ,  
 Ո՛վ ցանկալիդ իմ հայաստան:

Մ. Գեշիկթաշլեան.

## ԵՐԳ ՄԵՄԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ

Հուր բարկութեան համայն հայոց  
 Բորբոքեալ զերդ բոց բարկածայթ,  
 Եւ կայծականց զբիւր բիւրոց  
 Զարթոյց 'ի մահ սարս սառնապատ:  
 Զի՞ վարանիմք աստ անդ, եղբարք,  
 Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ:  
 ՅԱրտազ, Տղմուտ Օնդրոյդ 'ի դրոյդ,  
 'ի դրոյդ թռչիմք սլանամբ:  
 Հուր զէն 'ի ձեռին և վրէժ ահազին  
 Սպասեն և կան քաջ Արշակունեան,  
 Եւ յոր երկինք հանդիսատես  
 Զաշխոյժ նախնեաց հեղու 'ի մեզ:  
 Հապճն, քաջք քաջաց,  
 Ընդ սասան կուրծս  
 Մխեսցուք մկունս  
 Ուժգին 'ի հարուած:  
 Հուր զէն 'ի ձեռին... և այլն:

Ի. Սեւեֆեան.

## ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ահա բաժակ ուրախութեան,  
 'ի սէր յաւերժ միութեան.  
 Զի վայելուչ որդիք հայկեան  
 Մէկտեղ հրճուին և ցնծան:  
 Կեցցէ՛ սէր և միութիւն,  
 Կրեմք մի սիրտ, մի արիւն:  
 Վերցուր աչքդ չերկնից կամար.

Փայլի հեռուստ ասող մի պայծառ:  
Եւ դձու, ո՞հ, հայ, զարթի՛ր, սի՛րտ առ.  
Հայոց բազմն ալ չէ խաւար:

Կեցցէ չաւերժ միութիւն,  
Կրեմք մի սիրտ, մի արիւն:

Բա՛ւ է այսչափ բաժանումն.  
Ըլլամք ուրախ և խնդում,  
Նախանձ, վրէժ ձեզ թողում,  
Սնդուհոք և վի՛հք անհատնում:

Կեցցէ... և այլն:

Փորձ մը ըրինք բաժանման,  
Փորձ մ'ալ ընենք միութեան,  
Լեցուի փափաքդ, հայաստան,  
Տէ՛ս, որդիք քո միանան:

Կեցցէ... և այլն:

Ինչ և ընեմք, ինչ կերպ առնեմք,  
Ո՞ր չգիտաց, թէ մեք հայ եմք.  
Ո՞վ չգիտեր, թէ եղբայր եմք:  
Սրի՛ք՝ ծիծաղ զիձօք երգեմք՝

Կեցցէ... և այլն:

Ո՞ր բռնաւոր, ո՞ր օրէնքներ  
Կը պատուիրեն, թէ մի սիրեր  
Սզգիղ օգուտն ու բարիքներ:  
Սիրոյ գահն է չերկինս ի վեր:

Կեցցէ... և այլն:

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՈՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,  
Դու զարնան սիրուն թռչնակ,  
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,  
Թռչում ես այդպէս արագ:

Մի՛խ, թա՛ի՛ր, ծիծեռնակ,  
Ծնած տեղս—Սշտարակ,  
Անդ շինի՛ր քո բոջնը  
Հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու այլևոր

Հայր ունի՛մ սգաւոր,

Որ միակ իւր որդուն

Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորան,

Ինձնից շատ բարեւ արա՛,

Ասա՛ թող նստի լայ

Իւր անբախտ որդու վրայ:

Դու պատմէ՛ թէ ի՞նչպէս

Աստ անտէր ու խեղճ եմ ես.

Միշտ լալով, ողբալով՝

Կեանքս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը՝

Մութ է շրջում արեգը,

Գիշերը թաց աչքիս

Քուներ մօտ չի գալիս:

Ասի՛ր, որ չը բացուած՝

Թառամեցայ միացած,

Ես ծաղիկ չեղեցիկ՝  
Հայրենի հողից զրկած:

Դէհ, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացի՛ր, թռի՛ր արագ  
Դէպ 'ի Հայոց երկիրը,  
Ծնած աեղս—Սշտարակ:

Գ. Դոդոխան.

ԵՐԳ ՅՍ.ԻՍ.ԳԻՆ

Իմ սիրելի զաւակունքս  
Կը թափառին օտար աշխարհ,  
Ես ուր դիմեմ, ուր փնտռեմ,  
Կը ծառայեն այլոց խոնարհ:

Եկայք, որդեակք իմ,

Ձեր ձօրն այցելութեան:

Դարեր անցան, լուր մը չ'առի,

Իմ քաջերս մեռան, կորան.

Կուլած, արիւնս կը սառի,

Մէկը չունիմ՝ տալ ինձ դարման:

Եկայք, որդեակք... և այլն:

Արիւնս ցամքած, սիրտս մաշած,  
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան,

Եւ կարօտոյն իմ որդեկաց

Պիտի իջնեմ սե գերեզման:

Եկայք, որդեակք... և այլն:

Եւ դու, հովիւ թափառական,  
Կ'երգես տխուր 'ի մէջ հովտաց,  
Ե'կ արտասուենք թանկ կորստեան  
Տխուր մահուան մեր որդեկաց:

Եկայք, որդեակք... և այլն:

Իսկ դու, կռունիկ իմ Հայրենեաց,  
Գնա՛ հեռու աչքէս 'ի բաց,  
Յետին ողջոյնս տար զաւակացս,  
Ձի կեանքիս մէջ յոյսս է մեռած:

Եկայք, որդեակք... և այլն:

ԹԱՂՈՒՄՆ ԳԱՋՈՐԴՈՅՆ

Ոչ փող զարկինք, ոչ արծաղանք լեռնասոյզ  
Սարէ 'ի սար չարաշուկ տարին լուր,  
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյզ  
Երբ պատանույն բացինք մռայլ փոսին դուռ:

Գիշերական մունջ ստուերներ շուրջ կային,

Երբ հրացանի կոթով զհող փորեցինք.

Հուսին միայն դողող շողաչր մեր գլխին.

Սուգ էր պատեր զգաշտ, բլուր և երկինք:

Պէտք չէր դադաղ և ոչ ձերմակ պատանքներ,

Որով գոցուէր ազատորդի քաջորդին.

Նա չետ մարտին կարծես յոգնած կու հանդէհ,

Ու փերարկուն կարմիր բաւեր իւր անձին:

Անձայն ու կարծ «նչեցելոց» մի գրուցեց

Մեր քաջ տերտերն, զինուոր Հայոց և Սատուծոյ,

Գոպեց զմահն և զքաջութիւնն իւր օրհնեց.  
Թող չը տուաւ հառաչ մ'ու ձիջ հանելոյ:

Բայց երբ զլուխն 'ի բարձ գրինք հողաշէն,  
Տեսանք զդեղ ճակտին ու վերքն պայծառ,  
«Ո՛վ պատանեակ,—ըսինք ամենքս մէկ բերնէն,—  
Վասն հայրենեաց մեռար, դու շատ ապրեցար:

«Գնա՛ զրուցէ հայկազարմից մեծ ոգւոց,  
Որ կան այստեղ ազատ ու քաջ դեռ հայեր,  
Որոնք 'ի բիւր պատերազմաց թէպէտ խոց՝  
Մէջ ամպրսպաց 'ի ժայռ կանգուն են կեցեր. .»:

Մէջ մ'ալ քամի յանկարծ փչեց ցրտաշունչ,  
Լուսնին շողերն եկաւ դոցեց մ'թին ամպ,  
Ու մերթ սարերն զերթ ուրուականք անմուռնչ  
Սև զլուխնին տնկած դիտեն ապշութեամբ:

Յայնժամ ցուրտ ցուրտ հողլեցուցինք իւր վրան,  
Խաչ մը գրինք, ինչպէս իւր ձօր պատուէր ետ.  
Ոչ այլ շքեղ արձանագիր, ոչ տապան.  
Զինքը մինակ թողուցինք իւր փառքին հետ:

Ս. Պէշիկ/ժաշկեան.

Ի ՇԱԻԱՐՇԱՆ ԴԱՇՏԻՆ ՎՐԷԺԺ

Բամբ... Որոտան բարձուստ բոմբիւնք Այրարատեան  
դաշտն ի վայր  
Արի արանց արիւնքն յեռանդն առատանան ի հրա-  
զայր:  
Նրաւէրք հայրենեաց հոչակի բնդհանուր,

Հոգիք հայկազանց բորբոքին 'ի հուր.  
Որք երկնաւորի պսակին էք կարօտ,  
Որք երկնաւորին փառաց երկնայորդ:  
Հապօն, արի արանց մանկունք,  
Հայրենավրէժք հայկազունք.  
Հապօն 'ի զէն գունդ 'ի գունդ,  
Յեռեալ 'ի պար թունդ 'ի թունդ.  
'ի զէն, 'ի վրէժ, օն անդր, յառաջ,  
'ի զէն, 'ի վրէժ, մի ձախ մի յաջ,  
Օ՛ն անդր յառաջ,  
Հապօն յառաջ:

Տ. Ղ. Աւետ.

Լ Ո Ի Ս Ի Ն

Լուեց: Ամպերն եկան ծածկեցին  
Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին.  
Մնացի մենակ, հոգիս վրդոված,  
Զեռնեքս ծոցիս, զլուխս քարշ արած:  
Եւ այնուհետեւ ամեն իրիկուն  
Մնում եմ լուսնի խողաղ ծագելուն.  
Նորա տխրամած դէմքը նայելիս՝  
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:  
Ա՛խ, ցոլա՛-փայլէ՛, տխրադէ՛մ լուսին,  
Գուցէ քո փայլից փայլ տաս և հային.  
Պատմէ շատերուն Վարդանի մահը,  
Կամ ի՞նչպէս կորաւ հայ ազգի գահը,

Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան  
Մայրենի հողը՝ աշխարհ հայաստան:

Կամառ — Գաթիկա

### ԾԵՐՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Թէ իմ այլևոր հերքս սենային,  
Ուժս ինձ չեա գար, կտրի՞ն դառնայի,  
Նժոյգ ձի նստած, բեխերս ոլորած,  
Չեռս թուր առած ես դաշտ կերթայի:

Ես դաշտ կերթայի, դաշտ Աւարայրի,  
Ոյողած ցօղած հայոց արիւնով.  
Ազգ իմ սիրական, դու ազգ թորգոմեան,  
Գո կորցրած թաղը քեզ չեա կուտայի:

Կասէի հայոց օրիորդներին.

«Ծախեցէ՛ք հազի ձեր թանկ շորերը,  
Թողէ՛ք պանուճանք, դարդ, մարգարիտներ,  
Ժանգոտած ու գուլ են մեր թրերը:

«Տուէք բեհեզեայ մեզ ձեր շապիկը,  
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վերջը.  
Վիրակապ հիւսէք դուք ձեր մագերից,  
Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը»:

Թէ ես լինէի հարուստ մեծատուն,

Մտուկներս լի ոսկով, արծաթով.

Շատերու նման ես չէի լինիլ

Երբէք ազգասէր ունայն խօսքերով:

Շամպանեա զինու, ալմաս խաչի տեղ

Կառնուի առատ զնդակ ու վառօդ,  
Արծակ համարծակ կերթայի հանդէպ,  
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով:

Թէ ես լինէի մի երկրի իշխան,

Կուտայի զօրքիս սաստիկ հրաման՝

Շուտաքայլ երթայ դէպ ՚ի հայաստան,

Խղճուկ հայ ազգին լինել օգնական:

Եւրոպ, Ասիա արեան գետերը

Կը վազեցնէի հեղեղի նման,

Մինչև որ թագ, գահ և ազատ կրօն

Ինձնից չ'ստանար թշուառ հայաստան:

Բայց եթէ մի օր, մի ժամ, մի բույժ

Աստուած լինէի մեր հողազնդին,

Ի՞նչ սուր սլաքներ պիտի շօղ տայի

Մեր արիւնարբու թշնամեաց զնդին:

Նենգ... Պարսիկ սխերիմ,

Դարևոր ոսոխ դու Յոյն կրօնամուլ,

Գիտցիր, որ իմ սուր երկսայթի սրից,

Անվնաս չէր մնալ ո՛չ մի ձեր որդին:

Թ. Տ. Գ. Պատկանեան

### Կ Ի Լ Ի Կ Ի Ս.

Երբ որ բացուին դռներն յուսոյ,

Եւ մեր յերկրէն փախ տայ ձմեռ,

Չքնաղ երկինս մերս Արմենիայ,

Երբ փայլէ իւր քաղցրիկ սրեր,

Երբ որ ծիծառն ՚ի բոյն դառնայ,

Երբ որ ծառերն հազնին տերև,  
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,  
Աշխարհ՝ որ ինձ ետուր արև:

Տեսի դաշտերն Ունուրիոյ,  
Լեռն Լիբանան և իւր մայրեր.  
Տեսի գերկինս Իտալիոյ,  
Վենետիկ և իւր կոնտոլներ:  
Կղզի նման չիք մեր Կիպրեայ,  
Եւ ոչ մէկ վայր է արդարև.

Ցանկամ տեսնել... և այլն:  
Հասակ մը կայ մեր կենաց մէջ,  
Ուր ամենայն իղձ կաւարտի,  
Հասակ մը՝ ուր հէզին 'ի տենչ,  
Յիշատակաց իւր կարօտի:  
Յորժամ քնարս իմ ցրտանայ  
Սիրոյն տալով վերջին բարևս,  
Երթամ ննջել չիմ Կիլիկիա  
Աշխարհ, որ ինձ ետուր արև:

\* \* \*

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Հայաստան, երկիր զրախտավայր,  
Դու մարդկայնոյ ցեղիս որրան,  
Դու և բնիկ իմ Հայրենիք,  
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

'ի վեհ անունդ սիրտ իմ, ոհ, յոյժ  
Ոգևորի 'ի նոր խրախոյս,  
Եւ անձկայրեաց 'ի քեզ յուսամ,

'ի քեզ, 'ի քեզ, յոյս իմ միայն  
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան անուն փարելի,

'ի քեզ հանգիստ նոյեան տապան  
Եզիտ, և քե ապրեցաւ նոյ,

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Դետք քաշառաչք աղենուրուղի

Զհողք բարի առնեն յուրթի,

Քե ապրիմ ես, քե միշտ ցնծամ,

Քե, քե պանծամ փառք իմ միայն

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան ծնող դիւցազանց

Եւ հրաշայեաց հանդիսարան,

Քո զեփիւռին քաղցր է հնչիւն,

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Զոր շնչեցին և զօրացան

Հայի, Արմենակ, Արամ, Տիգրան,

Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,

Զքեզ չիշեմ, զքեզ սիրեմ,

Զքեզ, զքեզ, սէր իմ միայն

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Յ. Միրզա-Վանանդեցի.

Հ Ա Յ Մ Ե Ռ Ի Ն Ի Ք

Ո՛հ եզրաբք, ո՛չ օտարներէն չկայ յոյս.  
Մի՛ աշուրներդ դարձնէք յայս յայն կոյս:  
Օտարն զձեզ թէկ սիրէ իւրաբար,

Օտարն, ահ, միշտ է օտար:  
 Օտարը ձեր վիշտ կը դիտէ անգորով.  
 Ի՞նչ փոյթ որ դուք թափէք արցունք արիւնով:  
 Ով որ հայ չէ՝ հայուն ցաւերն ան չ'զգար.  
 Ի՞նչ կը խաբուիք անդադար:  
 Մի՛ դուք ձեր յոյսն մի՛ աւանդէք օտարին,  
 Մի՛ խոր վերքերդ ցուցունէք անգութին.  
 Արգալատանս կը յուսայք օգնութիւն,  
 Չեզ կը ծաղրէ մերկութիւն:  
 Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը,  
 Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը.  
 Հայ անուամբ զմեզ կողջունէ երկինք.  
 Եղբարք, հայ ապրինք:  
 Հայ ապրինք: Մեր հայրն է այն դիւցազուն,  
 Որ ազատութիւն սորվեցուց մարդուն  
 Ու մեզ վեհ անունն ճը տուաւ բաժին.  
 Եղբարք, հայ ապրինք:  
 Գիտե՛մ, ձեր բեռը ծանր է, ով հայեր,  
 Բայց չկարծէք զայն վերցնեն օտարներ.  
 Թողէ՛ք զօտար, տուէ՛ք եղբայր եղբոր թև  
 Եւ զօրացէք անդ եթ լւ:  
 Բաղդը դարձեր է ձեզի դէմ թշնամի.  
 Մի՛ վհատիք, ցուցուցէք սիրտ հայերի,  
 Չէ՛ կարող բաղդ յաղթել ազգին այն քաջի,  
 Որ բաղդին դէմ կը կռուի:  
 Չեր հայրերուն ոչ շղթայք, ոչ սուսերնէր.  
 Չկարացին ընկճել ոչ միտք, ոչ սրտեր:  
 Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ տկար, հէք.

Ի՞նչ, այն բաշաց որդիք չէ՞ք:  
 Չէ՞ք դուք որդիք այն դիւցազանց աննման,  
 Որ հայրենեաց ճենճերեցան 'ի սեղան...  
 Չէ՞ք դուք որդիք այն մեծ հայոց, որոց կեանք  
 Են մարդկութեան իսկ պարծանք:  
 Դուք, որ ունիք ձեզ պատմութիւն մ'ազգային,  
 Որոյ վրայ մեծ ազգեր իսկ նախանձին,  
 Ինչո՞ւ այսօր մոռցած զանցեալ ձեր փառաց՝  
 Երանի տաք օտարաց:  
 Օ՞հ, ով կը զգայ 'ի սիրտ եռանդ և ոգի,  
 Թողու զօտար և իւր նախնեաց հետևի.  
 Մեր կեանքը հոն է, ուր կրօնից մեր սեղան,  
 Այն է հայոց վառարան:  
 Եղբարք, հայուն կեանքը երբէք չի մարիր,  
 Երկինք լեցուն են այն բոցով կենսածիր.  
 Որչափ տիրէ մշտայաղթ Խաչ Քրիստոսի,  
 Հայն ալ անոր հետ կապրի:  
 Ի՞նչ կը վախնայք... զլուխնուդ վրայ չէ՞ք տեսներ  
 Քառաթևին դիւատարսուռ վեհ ստուեր.  
 Չայն սուրբ փայտին բուն շաղկեցին ձեր հարբը  
 Իրենց վսեմ արեամբը:  
 Դուք ալ խաչին խարսխեցէք ձեր յոյսը,  
 Եւ, հաւտացէք, պիտի ծագի ձեր լոյսը.  
 Նա ազգութեանդ եղաւ պարիսպ տմրափակի,  
 Նա ձեր ըլլայ զէնք, դրօշակ:  
 Ո՞հ, հնար չէ, որ կորսուի այն ազգը,  
 Որ հաւատարիմ մնաց Խաչին միշտ ոտքը,  
 Նորա կեանքը պիտի տուէ այնչափ դար,

Որչափ կրօնից կեանք՝ յաշխարհ:  
Այն վեհ կրօնից և ազգութեան անունով,  
Հայ եղբարք, ձեռք ձեռքի տուէք հուր սիրով.  
Ատելութիւն, քէն մերժուին, օն, ՚ի բաց.

Անիծեցէք զազգատեաց:

Ամենուր սիրա՝ զդայտուն սէրն հայրենեաց,  
Ամենուր միտք թուշի յօգուտ համազգեաց,  
Ու ձեր յետին եղբօր արցունք ու ցաւ միշտ  
Ըզգացէք իբրև ձեր վիշտ:

Օտարին հաց մեզի սնունդ չէ բնաւ,  
Օտարին շուր, ոչ, չձարեր մեր ծարաւ.  
Մեզի կենաց տուող և մեր պահապան  
Է աւագանն հայկական

Այն Աւագանն, այն հայութեան կնքատուն,  
Ո՛հ, շուրանամք, եղբարք, յուսովք զազգիազիուն:  
Եւ թէ մեր շունչ պիտի մարի վերջապէս,  
Թող մարի այն սուրբ կրկէս:

Թող ամենքս ալ ընդունի նոյն գերեզման,  
Վասն զի նոյն էր ամենուս ալ որրան...  
Հայ ծնունք մեր, հայ ապրիւնք, հայ և մեռնիւնք,  
Օ՛ն, հայ մտնենք և չերկինք:

Խ. Ա. Պալիսեան.

### ՀԱՅ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ.  
Երբ միտս էք գալիս, ասում եմ ես «*ախ*»,  
Հալում եմ, հալում օտարութեան մէջ,  
Ախ, սիրտս խորվում. ցաւիս չը կայ վերջ:

Երբ կարծիր գինին բաժակումս ածած,  
Սեղանիս վրայ առաջս է դրած,  
Աչքս սկամայ վրան եմ ձգում,  
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:

Տեսնում եմ և, ախ, միտքս է մոլորում,  
Դառն արտասուներով աչքս պղտորում,  
Կարծում եմ բոլոր աշխարհը մթնեց,  
Արևն էլ խաւրեց, էնդուր որ տխրեց:

Հայոց աղջիկներ ձեր հոգուն մեռնեմ,  
Ձեր սիրուն աչերն էլ երբ կը տեսնեմ,  
Է՛ն սե սե աչերն՝ սե ունքով պատած,  
Կարծես՝ երկնային զալամով քաշած:

Է՛ն սե սե աչերն, որ շատին սպանեց,  
Բայց էլի շատին զժողքից հանեց:  
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,  
Առանց կրակի էրուած, խորոված:

Էլ երբ կը տեսնեմ ես ձեզ ման գալիս,  
Բազ ու բաղջայում սէլրան անելիս,  
Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,  
Երբ որ ձեր կարծիր թշերը տեսնում:

Բուլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝  
Թռչում է, թռչում, ամպերում կորչում

Եւ իր Արարչի տեսածն ասելիս  
Փանօք Քեզ, Տէր Աստուած, փանօք քեզ է կանչում:

Հայոց աղջիկներ, ի՞նչ անուն տամ ձեզ,  
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,  
Թէ մարդ անուանեմ՝ բեղամաղ կանեմ,  
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես:

Մոլորուած եմ ես օտար աշխարհում,

Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,

Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման,

Հայոց աղջիկներ, դուք էք աննման:

Ձեր սէրն է միայն սրտուձա պահած,

Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,

Ձեր սէրը միայն էս կեանքս մտշուած

Օտարութեան մէջ դեռ կը պահպանի:

Գեորգ Միրիմանեանց.

### ՀԱՅՈՑ ԳԻՆԻ

Բաժակներ առնունք, եղբարք,

Լիք լիք բաժակներ զինով,

Կարմիր ու ճերմակ զինին

Մեզ լինի անուշ համով:

Բերներիս տաններ անվախ,

Ձէ դա խառնած կամ խարդախ:

Նեկտար է և ո՛չ զինի

Խմենք՝ մեզ անուշ լինի:

Արարչս ջրով ցօղած,

Հայոց արևով հասած,

Հայոց աղջիկ է քաղել,

Քնքոյշ ձեռներով քամել:

Սյս բերքն է Հայոց երկրէն,

Հայաստան տնկած Նոյէն,

Անմահ երկնային զինին

Նա խմեց, երբ իջաւ սարէն:

Սյս անուշ զինին խմողը

Սրտէն թող հանէ ոխը.

Ամենքս էլ ասենք ամէն,

Որ մեզի շատ տայ ամ էն:

Ա. Պատկանեան.

### ՀԱՅՐԵՆԵԱՅ ՁԱՅՆ

Օտար ափունք յրուած ՚ի սփիւռ,

Ո՛վ սիրասուն իմ զաւակունքս,

Ձեր Հայրենիք տրտում ախտ: ր

Ձեզ կը դիտէ արցունք յաչքունս:

Իմ տաճարներս սէր կը կանգնէ,

Իմ նախատինքս արիւն սրբէ:

Ո՛հ, այս քանի՛ տարի անցաւ,

Ուխտեցիք ինձ սէր, յոյս և կեանք.

Ամուլ մրցում, հեռ, վիշտ և ցաւ,

Ա՛յս է իմ բաժինս, ա՛յս է ձեր շանք:

Հնոց ո՛վ դուք, ՚ր օտարին

Փառաց, պատուո՛չ էք խնկարկու,

Անմահութեան դրոշմ ազգին,

Նախնեաց քրտինք ծախած շրփայ.

Իմ տաճարներս դուք չէք կանգներ,

Իմ նախատինքս զուր չէք սրբեր:

Ո՛հ այս քանի... և այլն:

Կանցնին այսպէս անթիւ օրեր

Եւ յաւերակս նստած յերեր

Իբրև այրի հրոյ մատնած

Կոյս, ոչր օժիտն է անարգուած,

Գոչեմ՝ «Տանարներս ո՛վ կը կանգնէ,

Իմ նախատինքս ո՛վ կը սրբէ»:

Ո՛հ, այս քանի... և այլն:

\*  
\*  
\*

### Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Թէ իմս հայրենեաց քնար սգաւոր

Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն,

Թէ նորա բեկբեկ թելեր վշտաւոր

Խօսի ողբածայն՝ իմ սրտիկս է այն:

Թէ հայ մուսային սրտառուչ նուազ

Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է այն,

Թէ հայրենիքիս սև բաղդին հազազ

Լայ աղէկաուր՝ հեծեծանքս է այն:

Թէ իմս հայրենեաց կիսամեռիկ շունչ

Դեռ լսի տխուր՝ իմ ողբերս է այն,

Թէ լռիկ մնչիկ հեծէ անշշունջ,

Ո՛հ, անկարեկիր իմ լալիքս է այն:

Եւ հայկաչ փառաց յօժար ողբերգուն

Հարազատ լացողն՝ իմ ձայնիկս է այն,

Չորս հազար տարուան պարծանաց դա-

րուն

Արձագանք տուողն՝ աղաղակս է այն:

Իմ հայրենիքիս ցաւերուն հատոր

Սհա այս մաշած իմ կուրծքս է այն,

Սև սև թերթերուն էլ սրտակոտոր՝

Արտասուօք զրուած՝ իմ ալիքս է այն:

Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր

Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն,

Թէ աչքէ անցնես շամփրած նիզակներ

Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է այն:

Թէ արեամբ ներկէն ակունք եղեմին՝

Նշխար պապերուն՝ իմ բիբերս է այն,

Թէ քաղցր ու անբիծ ալիք եփրատին

Լեղի են դարձեր՝ արտասուքս է այն:

Թէ վճիտ գեանքն, աղբերքն արծաթի

Լալիք առուակն՝ երակներս է այն...

Թէ սառնամանիք ձմրան բբաբեր

Լեռներն է պատեր՝ իմ գագաթս է այն,

Եւ քաղցրիկ գեփիւռն, անուշակ հովեր

Յրտագին փչեն՝ իմ շնչիկս է այն...

Ս. Հ. Յէլեկեան.

### Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Իմ հայրենիք զիս կը կանչէ,

Հեռու եմ հայաստանէն.

Հայու որդւոյն կը վայելէ՝

Հեռանայ հայաստանէն:

Միթէ արծաթ, ոսկի, գոհար

Կը սփռի՞ հայաստանը,

Այն որ կողբայ որդւոց համար.  
Խղճալի հայաստանը:

Խոր տխրութեան մէջ է թաղուեր  
Թագուհի հայաստանը,

Բոբիկ ոտքով, ազատ մազով  
Կ'արտասուէ հայաստանը:

Անգութ երկինք ալ չի չիշեր,  
Մոռցեր է հայաստանը.

Անսիրտ հայերն ալ չեն սիրեր  
Անուշիկ հայաստանը:

Ո՛հ, թողէք զիս՝ խօսիմ ազատ,  
Երգեմ միշտ հայաստանը,

Անուշ երկիր, կոյս անարատ,  
Աննման հայաստանը:

Արև ծածկեր է իւր դէմքը,  
Խաւար է հայաստանը,

Հայոց արևն ալ մարեր է,  
Սև հագեր է հայաստանը:

Թշուառ սրտիս ձայն կը կտրէ  
Ողբալով հայաստանը,

Ո՛հ, չկայ հայ, որ սփոփէ  
Նուաղեալ հայաստանը:

Թէև կտրի իմ վերջին շունչս,  
Պիտի պոռամ հայաստան,

Պլլուիմ մէջ մ'իմ հայրենեաց  
Հապա մտնեմ գերեզման:

Անգորրութիւն ես կը խնդրեմ  
Սիրելի հայաստանին.

Կտրել այս ձայնս, չէ, չէ՛ կարող  
Սոսկումն գերեզմանին:

Ս. հայհ.

### ՀԱՅ ՔԱՂՈՐԴԻ

Ապառաժուտ լերան մը կող  
Յեղեալ 'ի քար գերեզմանի՝  
Աչք մերթ յերկինս և մերթ 'ի հող  
Խարախշագեղ կայր պատանի.

Ո՛վ դու որդիդ լերանց, հովտաց,  
Ինչո՞ւ այդպէս սիրտդ է ցաւած:

Կուզե՞ս որ մեծ փոթորկեալ ծով  
Մատուցանէ քեզ մխիթար,  
Կոհակաշարժ իւր լարերով  
Երգեալ 'ի շունչ մըրկավար:

Ո՛վ դու որտիդ... և այլն:

Կուզե՞ս որ քեզ ահեղաշուք  
Խնդայ կամարն աստեղց անթիւ,  
Եւ բնութիւն պայծառ զարդուք  
Ժպտի ծաղկամբ և գեփիւռիւ:

Ո՛վ դու որդիդ... և այլն:

Կամ փափկազոյն այլ սփոփանք  
Միթէ կուզե՞ս մօր քաղցունեի  
Ու սիրուհւոյ անոյշ զգուանք  
Որ քու կսկիծդ փարատի.

Ի՞նչ ի՞նչ կուզես, ո՛հ, մի՛ ծածկեր...

— Կուզեմ վառօղ և զնդալիներ:

Մ. Պէրկիթաշեան

## ՄԱՆ ՔԱԶՈՐԴԻՈՅՆ

Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ,  
 Ե՛կ, մի՛ դողար, մօտեցի՛ր հոս.  
 Անլաց աչօք դիտե՛ գորգի՛դ  
 Աւ իւր վերքերն արիւնահոս:  
 Խուժից մայրեր թող լան, ու դուն  
 Աւրախ լուրեր տար 'ի մե՛ք տուն:  
 Ինչպէս երբեմն որրանիս մէջ  
 Կակուղ ձեռքով փայփայելով  
 Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր  
 Իբրև հրեշտակ նուազելով,  
 Զիս հանգչեցուր 'ի հող, և դուն  
 Աւրախ լուրեր... և այլն:  
 «Նորեկ որդւոյս կենացն արև  
 Զեղի համար փայլի, հայե՛ր»:  
 Այսպէս յայնժամ դու երգէիր  
 Օրօրոցիս նստեալ քովեր.  
 Անոնց համար շիջաւ, և դուն  
 Աւրախ լուրեր... և այլն:  
 Կարծիր կալլակք ցայտին վերքէս,  
 Սակայն, մայր իմ, նայէ՛ չորս դին,  
 Զարիւնուշտ ոսոխքն տե՛ս  
 Հազարներով փռուած գետին.  
 Կերաւ զանոնք սուր մեր, և դուն  
 Աւրախ լուրեր... և այլն:  
 Մանչեցին ինչպէս վիշապ  
 Աւ մեր վրայ յարձակեցան:

Ո՞վ հայրենիք, 'ի հուր, 'ի բոց  
 Քո համար մեր սիրտք վառեցան:  
 Կարծիր ներկան ձորք մեր, և դուն  
 Աւրախ լուրեր... և այլն:  
 Աւ ծափ զարկին մեր հարց սակերք,  
 Զի չէ մեռած հայոց կրակ,  
 Աւ ցնծացին այնչափ գոհեր,  
 Զի լուծաւ վրէժ յարեան վտակ:  
 Խնդաց Մասիս, մայր իմ, և դուն  
 Աւրախ լուրեր... և այլն:  
 Վերջին համբոյր տամ քեզ, մայրի՛կ,  
 Հատուցանե՛ս զայն սիրուհւոյս.  
 Վերջին անգամ զրկեմ մեր հող,  
 Այր արդ կիջնամ 'ի ծոցն անույս:  
 Խաչ մը տնկէ վրաս, ու դուն  
 Աւրախ լուրեր տար 'ի մեր տուն:

Մ. Պէշիկեան:

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ո՞վ մեծաքանչ դու լեզու,  
 Ո՞վ հեշտ բարբառ մայրական,  
 Փափկահնչիւն քո բառերուդ  
 Նման այլ տեղ արդեօք կամ.  
 Դու որ նախ ինձ հնչեցիր  
 Նախ սիրոյ, ո՛հ, հեշտ խօսքեր,  
 Այն նախ զքեզ թոթովելս  
 Դեռ իմ մտքէս չէ ելեր:

Ի՞նչ դառն վիշտ է սրտիս,  
Երբ օտար տեղ ու լեզու  
Բռնի իրենց զիս քաշեն.  
Սրտէս արիւն կը հեղու:

Ո՛հ, զայն օտար ես սիրել  
Բնաւ չեմ կարող 'ի սրտէ.  
Չէ, այն չէ քաղցր իմ լեզու.  
Որ սիրով զիս կողջունէ:

Իմ մայրենի քաղցր լեզու,  
Կեանց անսասան, կեանց յաւէտ,  
Կեանց միշտ լեզուդ դու հայկարժան,  
Կեանց ծաղկալից, ծաղկաւէտ:

՝ Ի Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Հ Ա Յ Ո Ց

Ահա հրեշտակ ոսկեփետուր թռուցեալ բարձուստ  
երկնաճեմ,  
Հայոց բաղդին հեծեալ 'ի կառս բարձր զոչէ զուար-  
թադէմ:

Հօր պատգամ  
Ի վերուստ դամ.  
Միութիւն, հայք,  
Եւ նոր ձեզ կեանք:

Տրոփին ուժգին և՛ լանջք և՛ սիրտ,  
Խայտայ արիւն 'ի թինդ, 'ի թինդ,  
Մեղր կաթէ սուրբ սերն 'ի խինդ  
Յառաքինւոյն 'ի հայու սիրտ:

Սիրարորբոր համբոյր բղխեն,  
Սրտասուաթոր աչկունք ցօղեն:

Արիք, հայկազունք,  
'ի սէր փութասցուք,  
Եռանդուն մատիք  
'ի համբոյր հեղիկ:  
Տուք համբոյր մի ևս,  
Սիրոյ է պարզէս:

Կեցցեն յաւերժ վեհ հայկազունք,  
Անմահութեան սիրոյ սերունդք.  
Կեցցէ յաւերժ հայկայ ողին.  
Մեզ են վկայ երկիր և երկին:

Անկաւ պարիսպ ժանտ նախանձուն ո՛չ 'ի շանթից  
ահարկու,  
Սյլ յակնարկի և եթ սիրոյ վերաստացեալ կեն-  
սատու,

Երկին երկիր  
Կան 'ի յակճիտ  
Ընդ հայ ազգիս  
Բիւր հրաշալիս:

Բացցին անդունդք սեաւ անյատակ՝  
Ծածկել զբաղդին հին յիշատակ.  
Տիեզերաց բացցին մատեանք՝  
Անդէն դրօշմել հայոց պարձանք  
Կեցցէ հայոց սէր պանծալի,  
Բերող փառաց նախանձելի:

Արի՛ք հայկազունք... և այլն:

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ԱՂԹԱՄՈՐԱՅ  
ԾՈՎԱԿԻ ԵԶԵՐՔԻՆ

Ձայն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես.

Ողբակից լինել չկամիս դժբաղդիս.

Շարժեցէ՛ք զեփիւռ ալիքը վէտ վէտ,

Խառնեցէ՛ք արտասուք այս ջրերիս հետ:

Հայաստանի մէջ անցքերին վկայ,

Սկզբից մինչ այժմ, խնդրեմ ինձ ասա՛,

Մի՞թէ միշտ այսպէս էր մնայ Հայաստան,

Փշալից անապատ երբեմն բուրաստան:

Մի՞թէ միշտ այդպէս ազգը խղճալի

Կը լինի ժառայ օտար իշխանի,

Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին

Անարժան է հայն և հայի որդին:

Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ՝

Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ.

Եւ ամեն կողմից պանդուխտ Հայազգիք

Դիմել զէպ իւրեանց սիրուն հայրենիք:

Դժուար այդ, միայն, Տեսուչդ վերին,

Կենդանացրու Հայութեան հոգին,

Ծագի՛ր նոցա դու քո լոյս գիտութեան,

Որով իբր էակք նոքա բանական,

Կը ճանաչեն մարդուս կեանքի խորհուրդը,

Կը լինի զորձովք Տիրոջ փառաբան:

Յ. Մելիք-Յակոբեան

ՇՈՒՇԱՆԻԿ

Է՛ր հեռանաս քո մայրենի աշխարհից,

Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.

Մեր ամենիս դու մայր էիր զթառատ,

Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անփարատ:

Ի՞նչ սուրբ ձեռք մեր վերքերը շատ անգամ

Լուանալիր, դեզ դնէիր ամեն ժամ,

Ի՞նչ մուգերից ոլորէիր վիրակապ,

Ի՞նչ բոլոր կեանքդ ազգիդ համար էր ազապ:

Արդ Հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,

Վրաց ազգը քո խնամօք պերճանայ,

Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից,

Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,

Մեր սիրտ հոգին քեզ հետ տանիս մաքրուհի.

Գնաս բարեաւ մեր լոյս հաւատն քեզ բնկեր,

Այն ու խաչը քեզ պահպան զօր զիշեր:

Յ. Կարինեանց

ՊԱՆԴԻՍԻ ԵՐԳ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,

Ի՞նչ, Հայրենիք, քեզ լիշելով կ'արտասուեմ:

Ձկայ ծնող, չկան որդիք, քօյր, եղբայր,

Ձիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ:

Օտար երկիր, արև, աստղեր և լուսին

Թէև պայծառ, ինձի խաւար կը թուի:

Բնակարանս՝ տխուր պանդոկ օտարաց,  
 Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:  
 Ո՛ւր է հայրս, ո՛ւր է մայրս քաղցրանուն,  
 Ո՛ւր զաւակունքս, ո՛ւր սիրելիքս սիրասուն:  
 Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս:  
 Կա օտար չէ, կա իմս է, սիրէ զիս:

\*\*

## ՊԱՆԴԻՍԻ ՈՂՋՈՅՆԸ

Ողջոյն տուէ՛ք իմ հայրենեաց  
 Կիսակործան տաճարներուն,  
 Ողջոյն տուէք աւերակաց  
 Արարատեան զաւառներուն:

Ողջոյն տուէք Աւարայրին  
 Արիւնաներկ սուրբ վայրերուն,  
 Ողջոյն տուէք տխուր լուսնին,  
 Որ լացնէ սև շիրիմներուն:

Ողջոյն տուէք պանդուխտ հայուն,  
 Թշուառ հայուն, չուառ հայուն:  
 Ո՛հ, ձեռք տուէք, ո՛հ, սիրտ տուէք,  
 Հոգի տուէ՛ք անկեալ հայուն:

Ողջոյն տուէ՛ք ոյր մոյր,  
 Մոյր վազող գետակներուն,  
 Ողջոյն տուէք պղտոր բոյր  
 Աղիւլեղի աղբիւրներուն:

Ողջոյն տուէք ՚ի հող եղած  
 Արքայական պալատներուն,

Ողջոյն տուէք զետնատարած  
 Սրբոց ամբիժ մասունքներուն:

Ողջոյն տուէք դուք խումբ ՚ի խումբ,  
 Որ կան թաղած հոգիներուն:  
 Ուր հայ սոխակը թումբ է ՚ի թումբ  
 Կեանք կը խնդրեն դեռ շատերուն:

Ողջոյն տուէք հայ մուսային,  
 Որ լայ զփռոս իւր հաւերու,  
 Ողջոյն տուէք իմ քնարին,  
 Որ հայկայ տանն է ողբերգու:

\*\*

## ՊԱՆԴՈՒԻՍ ՀՍՅՆ

Հայրենիք սրբազան,  
 Իմ սիրուն աշխարհ,  
 Թուշում եմ դէպի քեզ  
 Հոգովս անդադար:  
 Բայց, աւա՛ղ, այս բանտում  
 Փակուած եմ անտես,  
 Պատերազմի դաշտում  
 Ձեմ կուում և ես:

Հանապազ տանջուեցայ  
 Քո ճակատագրով,  
 Սրտումս շղթաների  
 Ձայներ կրելով:  
 Թող այստեղ չարչարուիմ  
 Անճանօթ կապուած,  
 Միայն քեզ, հայրենիք,  
 Տեսնեմ ազատուած:

## ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՐԿ

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտե՛ր,  
 Ի՞նչ կը յապաղէք ելնել 'ի Հանդէս,  
 Ի՞նչ կը յապաղէք. սիրտ կը դիմանայ,  
 Սիրտ՝ որ ազգասէր ըլլալ կը ցանկայ,  
 Տեսնել Հայրենեաց այսքան բիւր աղէտ  
 Եւ դեռ անտարբեր ցարդ մնալ յաւէտ:

Հեռ առելութեան և չար նախանձու  
 Սերմերն ու հոգին հեռու մղեմք, հեռու,  
 Սիրտ սրտի կապուած, թե թեի տուած,  
 Հայրենեաց սիրոյ ասպարէզ բացուած,  
 Օ՛ն վազեմք յառաջ 'ի սուրբ խաչ վստահ,  
 Օ՛ն երթամք յառաջ և անձնանուէր,  
 Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր:  
 Հայ, մի՛ վհատիր, սիրտ ան և սիրտ տո՛ւր.  
 Տկարք զօրանան, քաջք խրախուսին,  
 Վատերը բացուին, վատերը դատուին,  
 Ճշմարիտ Հայեր թող յառաջ անցնին:  
 Խաչ, սէրն են նշան ճշմարիտ հայուն,  
 Խաչ, սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն:

Սիրոյ դրօշներ թող արդ պարզուին,  
 Հաշտութեան ծայներ թող արդ հնչուին.  
 Հայն մէկ սիրտ եղաւ, սիրով միացաւ,  
 Սուտ են, որք կ'սեն, հայք զիրար կ'առեն:

Ս. Պ. Պ. Փափագեան.

## ՊԱՆԴՈՒԽՅ ԱՌ ԿՈՌԻՆԿՆ

Կո՛ւնկ, ուստի կուգաս, ծառայ եմ ծայնիդ.  
 Կո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս.  
 Մի՛ վազեր, երամիդ շուտով կը հասնիս.  
 Կո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս:  
 Թողեր եմ ու եկեր եմ մլքերս ու այգիս,  
 Բանի որ «անխ» կանեմ, կը քաղուի հոգիս.  
 Կո՛ւնկ, պահ մի կացիր, ծայնիկդ 'ի հոգիս.  
 Կո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս:

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ.  
 Զայնիկդ անուշ կու գայ քան զչրի տօլապ.  
 Կո՛ւնկ, Պաղտատ իջնուա կա թէ 'ի Հայապ,  
 Կո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս:  
 Սրտերնիս կամեցաւ, ելանք գնացինք,  
 Այս սուտ աստնուորիս դարդերն իմացանք.  
 Աղուհացիկեր մարդկանց կարօտ մնացանք.  
 Կո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս:

Աստնուորիս բաներն կամաց կամաց է,  
 Մի՛թէ Աստուած լսէ, դռնակն բացցէ,  
 Ղարիպին սիրտն է սուգ, աչերն 'ի լաց է.  
 Կո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս:  
 Աստուած, քիչ է խնդրեմ մուրվիթ ու քերէմ.  
 Ղարիպին սիրտն է խոց, ճիկերն է վերէմ.  
 Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ.  
 Կո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս:

Ոչ զլուր օրն գիտեմ, ոչ զկիրակին,  
 Զարկած է զիս շամփուրն, բռնած կրակին.  
 Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.

Կռճճնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
 Պաղտաաու կուգաս, կերթաս 'ի սէհրաթ.  
 Թղթիկ մի գրեր եմ, տամ քեզ ամանաթ.  
 Աստուած թող վկայ լինի քո վրագ.  
 Տարեալ հասուսցես զայդ իմ սիրելեաց:  
 Գրեր եմ մէջ թղթիս՝ թէ հոս մնացի,  
 Օրիկ մի օրեր զաչերս չբացի,  
 Սիրելիք, ձեզնէ կարօտ մնացի.

Կռճճնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:  
 Աշունն է մօտեցեր, գնալու ես թէտպիր.  
 Երամ ես ժողովեր հազարներ ու բիւր,  
 Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր.  
 Կռճճնկ, մեր աշխարհէն գնա՛ հեռացիր:

Վանեցի տիրացու Մհերտէչ.

ՊԼՊՈՒԼՆ Ա.Ի.Ս.Ր.Ս.ՅՐԻ

Ո՛վ դու բարեկամ այրած սրտերու,  
 Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,  
 Երգէ՛, պլպուլիկդ, երգէ՛ 'ի սարէդ,  
 Զանմահ քաջքն՝ հայոց երգէ՛ հոգւոյս հետ:  
 Թաւէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,  
 Սրահկս՝ ոո՛ 'ի խաչն էր կիպ՝ թունդ առաւ.  
 'ի խաչին թեէն թռայ ու հասայ,  
 Գտայ զքեզ 'ի դաշտ քաջին Վարդանայ:  
 Պլպուլ, քեզ համար մեր հարքն ասացին,  
 Թէ չէ հաւ՝ պլպուլ մեր Աւարայրին  
 Եղիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ,  
 Որ զՎարդան 'ի վարդն տեսնու չարմըիկ,

Զմեռն յանապատ կու գայ գայ 'ի լաց,  
 ՅԱրտազ գայ վարունն՝ 'ի թուփ վարդենեաց,  
 Երգել ու կանչել յեղիշէին ծայն,  
 Թէ պատասխանիկ մ'արդեօք տայ Վարդան:

Ճ. Ղ. Աւուան

Վ.Ս.Ր.Դ.Ս.Ն Մ.Ս.Մ.Ի.Կ.ՈՆ.Ե.Ս.ՆԻ ԵՐԿԸ

Հիմի՞ էլ լռենք, եղբարք, հիմի՞ էլ,  
 Երբ մեր թշնամին իւր սուրն է դրել,  
 Իւր օրհասական սուրբ մեր կրծին,  
 Ականջ չի դնում մեր լաց ու կոծին:  
 Ասացէք, եղբարք հայեր, թէ՛նչ անենք,  
 Հիմի՞ էլ լռենք:

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին  
 Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,  
 Զնչեց աշխարքից հայկայ անունը,  
 Հիմքից կործանեց թորդոմայ տունը,  
 Խլեց մեզանից թագ, և՛ խօսք, և՛ զէնք,  
 Հիմի՞ էլ լռենք:

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին  
 Խլեց մեր սուրբ՝ պաշտպան մեր անձին,  
 Մշակի ձեռքիցն էլ խփր խլեց,  
 Այդ սուր ու խփից մեր շղթան կռեց.  
 Վայ մեզ, շղթայով կապած զերի ենք,  
 Հիմի՞ էլ լռենք:

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին  
 Սոսկալի զէնքը բռնած մեր զլիւին՝

Կուլ տալ է տալիս արտասուէնք առաս՝  
Աղէխարչ բողոք վարուց ապիրատ.

Մեր գլուխը լալու եփրատ ուր պարենք,  
Հիմի՞ էլ լուենք:

Հիմի՞ էլ լուենք, երբ մեր թշնամին  
Լիրբ գոռոզութեամբ լցրած իւր հոգին,  
Արգարութեան ծայնն հանած իւր սրտից,  
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից.

Պանդուխտ հալածեալ, եղբարք, ո՞ւր գիմենք,  
Հիմի՞ էլ լուենք:

Հիմի՞ էլ լուենք, երբ մեր թշնամին,  
Անհոգ մեր բերած ծանր զոհերին,  
Իւր լիրբ, նզոված ձեռքը կարկառեց,  
Ազգայնութեանս վերջին կապը պատառեց.

Հայի կորուստը մտ է, ի՞նչ անենք.  
Հիմի՞ էլ լուենք:

Հիմի՞ էլ լուենք, երբ մեր թշնամին,  
Արհամարհելով մեր փառքն ազգային,  
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,  
Գառնազգեստ զայլին մեզ գլուխ դրաւ.

Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք.  
Հիմի՞ էլ լուենք:

Հիմի՞ էլ լուենք, մարդիկ ի՞նչ կասեն,  
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,  
Ձե՞ն ասիլ, որ հայք արժանի էին  
Այդ սարկական անարգ վիճակին.

Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,  
Մինչև երբ լուենք:

Թող լուէ մունջը, անդամալոյժը,

Կամ որոց քաղցր է թշնամու լուծը.  
Բայց մենք, որ ունինք հոգի և սիրտ քաջ,  
Եկ անվախ ելնենք թշնամու առաջ  
Գոնէ մեր փառքը մահով չետ խլենք  
Ու այնպէս լուենք:

Ռ. Տ. Գ. Պատկանեան

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄԵԾ ՎՍՀԱՆԻ ՊԱՏԱՍԻՍԱՆԸ

Հիմի՞ էլ խօսենք, եղբարք, հիմի՞ էլ,  
Երբ ընտանեկան երկպառակութեամբ  
Ուրիշ բան չ'ունինք, բայց իրար դաւել  
Եւ սարսափելի ազգուրացութեամբ  
Մեր նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք.  
Հիմի՞ էլ խօսենք:

Հիմի՞ էլ խօսենք, երբ քաջն Վարդան  
Վաթսուն հազարից՝ հազարով մնաց,  
Մինչ մնացել էր պարսից լոկ ձատեան  
Կունդը՝ մեր վաթսուն հազարի գիմաց,  
Երբ մեր վատութեամբ՝ ողջ կորուսել ենք.  
Հիմի՞ էլ խօսենք:

Հիմի՞ էլ խօսենք, երբ օտարից շաս  
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում.  
Մոխրատնով լցինք Դուին, Արտաշատ,  
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն.  
Երբ այս ամենը մենք կատարել ենք,  
Հիմի՞ էլ խօսենք:

Հիմի՞ էլ խօսենք երբ հրապարակում

Պարսիկը առակ արել է Հային,  
Եթէ՛ «Ասորու նման աշխարհում  
Չկայ մի վատ ազգ, բայց, քան Ասորին,  
Էլ վատ է Հայը»։ մենք այս տանձում ենք։

Հիմի՞ էլ խօսենք:

Հիմի՞ էլ խօսենք, երբ իշխանութիւն  
Ծախում է անարդ հացկատակներին,  
Մինչ ստրուկ մարդիկ նստան մեր գլխին  
Եւ մեզ կարծում են հող իրենց ոտքի,  
Ու մենք մեզ կոխող ոտքը լիզում ենք։

Հիմի՞ էլ խօսենք:

Հիմի՞ էլ խօսենք, երբ Լուսաւորչի  
Բնիկ ժառանգի թուերը կտրած՝  
Անարգ Պարսիկն այս ու այն թեմի՛  
Կարգում է տեսուչ ըստ իւր չար մտաց,  
Եւ մենք դեռ՝ «կեցցէ Արին» գոռում ենք։

Հիմի՞ էլ խօսենք:

Հիմի՞ էլ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,  
Երբ ողջունում ենք մենք այդ չքերին.  
Որ դրան շուն են և մեզ տեսնելիս՝  
Շուտ դիմակները դնում երեսին.  
Այդպիսիներին դարձեալ պատւում ենք։

Հիմի՞ էլ խօսենք:

Էլ մեր երեսին մնաց մի կաթիլ  
Ածօթի սուրբ ջուր, որ բերան բանանք.  
Ոչ թէ չենք ուզում հողից հող կորչել,  
Թշնամու արիւնով մեր թրին ջուր տանք.  
Ազգ, եկեղեցի փրկենք ազատենք,

Ապա թէ խօսենք:

Մ. Նալբանդեան

## ՏԱԼՈՒՈՐԻԿՑԻ ԿՏՐԻՃ

Տալուորիկցի կարիճ եմ զորթ,  
Քաղբջու պէս չեմ թուլամորթ.  
Սարի զաւակ, քարի որդի,  
Հին քաջ Հայոց եմ մնացորդ:

Տալուորիկցի զաւակ եմ քաջ,  
Չեմ խոնարհիր թուրքի առաջ,  
Քարոտ լերանց եմ ազատ լան,  
Չեմ տեսեր ոչ արօր, ոչ ման:

Հայ աղպրտիք, վայ աղպրտիք,  
Տալուորիկցի զաւակ եմ քաջ,  
Ազատութեան սիրոյն Համար  
Եկէք դէպ ինձ առաջ, առաջ:

Երբ որ բացի աչքս այս աշխարհ,  
Ազատ տեսայ մեր սար ու քար  
Մինչև փակեմ աչքս 'ի խաւար,  
Պիտ, չկոխէ Հոս ոտք օտար:

Իմ պապ ծնաւ զիս պալու ծոց,  
Ինձ ընկոյզ կոճղ մ'եղաւ օրօրոց,  
Տկող ծնայ, մեծցայ տկող,  
Իէմ արևու, սաստիկ Հողմոց:

Հայ աղպրտիք... և այլն:

Ոտքս բորիկ, կուրծքս միշտ բաց,  
Ի՞նչ փոյթ՝ թէ քոյրս ալ մերկ մնաց,  
Ինձ մօտ մէկ է արև, բուր, ցուրտ,  
Բաւ է չ'իշխեր վրաս թուրք, քուրտ:

Յորենի տեղ կուտեմ կորեկ,  
 Երկաթ ծեծեմ գիշեր-ցորեկ,  
 Շինեմ փէտատ, խոփ, խաճրկաթ,  
 Ծանր է դատուճս, բաց եմ ազատ:

Հայ աղպրտիք... և այլն:

Հարստութիւն, ուսում, հանճար,  
 Պատիւ և փառք չեն ինձ համար,  
 Բաւ է ունիմ ճաք, թուր, խանճար,  
 Բաւ է չիխշեր վրաս օտար:

Ձէնքս է միակ իմ խաղալիք,  
 Կ'ատեմ հանդարտ կեանք խաղաղիկ,  
 Կը սիրեմ որս, կռիւ, աւար,  
 Կը սպանեմ, երբ ընկնի հաւար:

Հայ աղպրտիք... և այլն:

Գիշեր գէնքս վրաս բնեմ,  
 Երազիս մէջ կռիւ կ'ընեմ,  
 Կռուելն ինձ մօտ խաղալ է,  
 Կռուով մեռնելն ինձ հալալ է:

Կռուի մէջը մեռաւ իմ պապ,  
 Այդ կերպ մահս է անուշ մրափ.  
 Ես ալ կուզեմ մահ մէջ կռուի,  
 Որ իմ անուն անմահ զրուի:

Հայ աղպրտիք... և այլն:

Այս սարերը անմատչելի  
 Իմ քաջ նախնիք երբ ընտրեցին,  
 Ըսին՝ «Ազատ որդոց որդի  
 Քաջաց սերունդ թող հոս ապրի»:

Եւ իմ խելօք չող պապ Յարէ,  
 Աստուած հողին լուսաւորէ,  
 Ինձ կ'ըսէր միշտ. «Ազատ ապրիր,  
 Մի ծուեր վիզ, հարկ մի վճարիր»:  
 Հայ աղպրտիք... և այլն:

Տալուորիկն է սև-սև սարեր,  
 Խոր, մութ ծործորք, սեպ-սեպ քարեր,  
 Վերև շուխտակ ծեր Մարաթուն.  
 Հողիս մատաղ մեր Մարաթման:

Մեզմով պարծի այսօր Սասուն,  
 Մենք ենք խրախօյս հայոց նկուն,  
 Տալուորի՛ սար, ժայռոտ Ձէյթուն  
 Տան իրարու ազատ ողջոյն:  
 Հայ աղպրտիք... և այլն:

Մ. Տամատեան

#### Գ. ԵՐԳԵՐ.

#### ԱՂԱՍՈՒ ԵՐԳԸ

Սար ու ձոր ընկած, մէկ չոր թփի տակի,  
 Գետնին նայելով՝ մնացել եմ նստած,  
 Ձեռս ծոցումս, զուխս մէկ լեռ քարի  
 Տուած լալիս եմ, որս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետևիս,  
 Ի եղ մտիկ տալով, ա՛յ իմ քաղցր Մասիս,  
 Աղի արցունքով էրուած-խորոված,

Երեսիդ նայեմ՝ մնամ քարացած:

Ծնողք, ազգականք հեռու ինձանից,  
 Լուսնին նայելով ձեր սէրն չիշելով,  
 Եարաք, երբ կրլնի, որ ես ձեզանից  
 Իմ կարօտս առնեմ՝ ձեզ ջան ասելով...:

Նազլու, իմ Նազլու, աննման Նազլու,  
 Սիրտս խորովի անունդ չիշելով.  
 Նազլու, իմ Նազլու, հրաշայի Նազլու,  
 Աղասին քեզ տայ իր յետին բարով:

Սարերի դոշին, ձորերի միջին՝  
 Վայ դլխին տալով քու խեղճ Աղասին,  
 Երեսիցդ զրկուած, քու սիրով մաշուած,  
 Տատրակի նման վշի վրայ նստած...  
 Քեզ եմ մնում, քե՛զ, քու ջանին մեռնեմ,  
 Հող ու գերեզման ես վրէս ունեմ,  
 Քանց իմ սառ մարմինն, էլ ի՞նչ գերեզման —  
 Ինձի պէտք կուգայ, երեսիդ զուրպան:

Խ. Աբովեան

### Ա.Ռ. ՍԻՐՈՒՀԻՆ

Գիշեր, ցերեկ կը հառաչեմ,  
 Ա՛խ, օրիորդ, քու սիրուդ.  
 Սե աչերուդ, վարդ այտերուդ  
 Զարնուեցայ, ի՞նչ օգուտ:

Աչերուդ, այտերուդ,  
 Եւ ոսկեթել մազերուդ,  
 Միայն քեզի սա կադաչեմ,

Որ ունենաս քիչ մը դուրթ:  
 Գիտե՛ս, անդուրթ, որ պատանին  
 Զի դիմանար այս ցաւուն,  
 Քեզի համար ալ չի դադրիր  
 Աչքիս արցունքն օրն ՚ի բուն:

Շատ աղուորներ թէպէտ տեսայ,  
 Սիրտս միայն քեզ սիրեց,  
 Ո՛հ, չեմ գիտեր, թէ քու սէրդ  
 Սրտիս մէջն ո՛վ արծարծեց:

Քեզի համար թափառական  
 Ես սար ու ձոր ինկեր եմ,  
 Քեզի համար ոչնչացեր,  
 Ոսկոր ու մորթ եղեք եմ:

Ալ բաւական է դիս խոցես,  
 Ահա ոտքդ ինկեր եմ,  
 Ըսէ ինձի բառ մ՛երջանիկ,  
 Թէ՛ «Ես ալ քեզ կը սիրեմ»:

Ե Ր Ա Ձ

Ես լսեցի մի անոյշ ծայն՝ —  
 Իմ ծերացած մօր մօտ էր.  
 Փայլեց նշոյլ ուրախութեան,  
 Բայց ափսոս, որ երազ էր:  
 Կարկաչահոտ աղբիւր այնտեղ  
 Թաւալում էր մարդարիտ,  
 Նա յստակ էր որպէս բիւրեղ.

Այն երազ էր ցնորամիտ:  
Եւ մեղեդին տխուր, մայրենի՝  
Յիշեց մանկութեան օրեր.  
Մօրս համբույրն ես զգացի,  
Ա՛խ, ափսոս որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարօտազին,  
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—  
Բայց արտասուք զնում էին,  
Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր:

Ս. Հահագիզեան

### ԵՐԳ ԱՉՏՏՈՒԹԵԱՆ

Ազատն Աստուած այն օրից,  
Երբ հաճեցաւ շունչ փչել  
Իմ հողանիւթ շինուածքին,  
Կենդանութիւն պարգևել:

Ես՝ անբարբառ մի մանուկ՝  
Երկու ձեռքս պարզեցի  
Եւ իմ անցօր թևերովս  
«Ազատութիւն» գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ  
Օրօրոցում կապկապած,  
Լալիս էի անդադար՝  
Մօրս քունը խանդարած,

Խնդրում էի նորանից  
Բազուկներս արձակել,  
Ես այն օրից ուխտեցի

«Ազատութիւնը» սիրել:  
Թո՛թով լեզուիս մինչ կապերը  
Արձակուեցան բացուեցան,  
Մինչ ճնողքս իմ ձայնից  
Խնդացին ու բերկրեցան,  
Նախկին խօսքն որ ասացի,  
Չէր «Նայր» կամ «Մայր», կամ այլ ինչ:  
«Ազատութիւն» դուրս թօաւ  
Իմ մանկական բերանից:

«Ազատութիւն,—ինձ կրկնեց  
Ճակատագիրը վերեւից,—  
Ազատութեան՝ դու գինուոր  
Կամիս գրուել այս օրից:

Ո՛հ, փշոտ է ճանապարհդ.  
Բեզ շատ փորձանք կը սպասէ.  
Ազատութիւն սիրողին  
Այս աշխարհս խիստ նեղ է»:

«Ազատութիւն,—գոչեցի,—  
Թող որոտայ իմ գլխին  
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,  
Թող դաւ զնէ թշնամին.

Ես մինչ 'ի մահ, կախազան,  
Մինչև անարգ մահու սիւն  
Պիտի գողամ, պիտ կրկնեմ  
Անդադար «Ազատութիւն»:

Մ. Նալբանդեան

## ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Մն, փութացէ՛ք, հասեալ է ժամ,  
 Հարէ՛ք մարտին փողերն ուժգին.  
 Մեզ ահարկու կայ պատերազմ,  
 Արեամբ զինեալ է թշնամին:  
 Փշրեմք ազատ, բանամք դռներ,  
 Չար նախանձու մեր ոխերիմ,  
 Որ դարերով է մեզ փակեր  
 'ի գերութեան, 'ի բանտ մթին:  
 'ի գէն, Օն, փութացէք  
 Գունդ 'ի գունդ, հայ ուստերք.  
 Լուսովն այս նոր դարերոյս  
 Վանե՛նք բռնութեան դաւ ու նենգ:  
 Մեր մարք, մեր քորք խոցեցան շատ  
 Շղթայակապ 'ի գերութեան:  
 Մինչ մեր հարք, եղբարք ազատ  
 Անփոյթ էին կոյր զկուրայն:  
 Անդ և լուսով ուսման  
 Տեսան վէրքերն իրենց ազգաց.  
 Ուստի լինին մեզ օգնական՝  
 Առնել նախանձ արտահայած:  
 'ի գէն ծն փութացէ՛ք... և այլն:

Ե Ր Գ

Մնասցենս բարեաւ, սէր իմ, սէր,  
 Հրաւէր մարտից որոտաց,

Թէ չեմ քաջաց ես ընկեր,  
 Չկայ բաժին ինձ փառաց:  
 Մի՛ լար, հողւոյս իմ հատոր,  
 Գուցէ դառնամ, ո՛հ, մի՛ լար.  
 Թ'անկայց մարտին ես 'ի գու,  
 Տեսցուք չերկինս մեք զիրեար:  
 Եղբայրադաւ չէ՛ նախանձ  
 Որ բորբոքեալ չիս վառի.  
 'ի սուրբ հողոյ Հայրենեաց  
 Բառնամ զլուծ օտարի:

Թարգմ. Իսաւ. Մ. Պէշիկթաշլեանի

## ԻՏԱԼԱՅԻ ՄՂԶԿԱՅ ԵՐԳ

Մեր Հայրենիք թշուառ, անտէր,  
 Մեր թշնամուց ոտնակոխ,  
 Իւր որդիքը արդ կանչու՞մ է,  
 Հանել իւր վրէժ, բէն ու ոխ:  
 Մեր Հայրենիք շղթաներով  
 Այսքան տարի կապկապած՝  
 Իւր քաջ որդուց սուրբ արիւնով  
 Պիտի լինի ազատուած:  
 Ահա՛, եղբայր, բեզ մի դրօշ,  
 Որ իմ ձեռքով գործեցի,  
 Գիշերները ես քուն չեղայ,  
 Արտասուքով լուացի:  
 Նայիր նորան. երեք գոյնով  
 Նուիրական մեր նշան

Թո՛ղ փողփողի թշնամու դէձ,  
 Թո՛ղ կործանուի Աւստրիան:  
 Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ  
 Պատերազմի գործերում,  
 Կարէ օգնել իւր եղբօրը՝  
 Զանց չարեցի քո սիրուն:

Ամենայն տեղ մահը մի է,  
 Մարդ մի անգամ պիտ մեռնի,  
 Բայց երանի՛, որ իւր ազգի  
 Ազատութեան կը զոհուի:

Մ. Նալբանդեան

## ԻՆՁ ՀԱՄԱՐ ԶԷ

Ինձ համար չէ զարնան դալը,  
 Ինձ համար չէ ծառի ծաղկիլը,  
 Ուրախութեան սրտի գրգիռը,  
 Ոչ մի բերկրանք չէ ինձ համար:  
 Ինձ համար չէ կենաց բաղդը,  
 Ինձ համար չէ երջանկութիւնը  
 Եւ մրայօն կուսի աչքերը,  
 Նոցա արցունք չեն ինձ համար:  
 Ինձ համար չէ փալլուն լուսնի  
 Անտառ ու սար լուսաւորելը,  
 Քարնան վարդի երգչի տաղերը,  
 Օտխակ ու վարդ չեն ինձ համար:  
 Ինձ համար չէ բարեկամաց  
 Մէկտեղ սիրով տօն կատարելը,

Զատիկ օրուայ ուրախ ասելը՝  
 «Քրիստոս յարեալ» չէ ինձ համար:  
 Ինձ համար չէ ծնողաց լացը,  
 Ինձ համար չէ աղջկայ տխրիլը,  
 Գերեզմանիս վրայ արտասուիլը՝  
 Բարեկամաց՝ չէ ինձ համար:  
 Բայց ինձ համար կուգայ ժամը,  
 Կերթամ թշնամեաց պատերազմը,  
 Եւ մահառիթ սպանիչ գնդակը  
 Անդ պատրաստած է ինձ համար:

Բ. Պաւկանեան.

՚Ի ՏԱՐԱԺԱՄ ՄԱՅ ԳԱՔՐԻԷԼԻ ԵՐԱՄԵԱՆ  
 ՀԻՄՆԱԴԻՐ ՀԵՂԻՆԱԿԻ «ՀՕՅԿՕԿԱՆ ՔՆՈՐ»-Ի

Քու ցուրտ շիրմիդ վրայ, ուր, վա՛հ, կայ թաղուած  
 Առոյգ հասակդ և սրտիդ հուր երկնասլաց,  
 Չէ՛ թէ միայն սփռենք ծաղիկ լի ձեռքով,  
 Չէ՛ թէ միայն արյունը անհուն ցաւերով,

Այլ և ձօններ վշտահար  
 Երգերն անուշ Քնարին,  
 Որոյ փափուկ թելերը  
 Դու հիւսեցիր սրտագին:

Այն նուագներն որ քու բերնէդ սլացան՝  
 Երթալ յողջոյն աւերակաց գիր և ցան,  
 Լսեց զանոնք ՚ի զամբանացն հայրենիք,  
 Եւ սփոփեցան հայաստանեայց վեհ ողբը:

Հսէ՛ զանոնք և զու ալլ,  
Մահուան քունէն արթնցիր,  
Այն Քնարին թելերով  
Յանձահութիւն ե՛լ թռիր:

Մ. Պէշիկթաշեան

ՄԱՅ ՊԱՆԴԻՍԻՆ

Մի՛ լայք, հայր իմ ու մայրիկ,  
Կոյս, մի՛ լար, թէ երթամ  
Յօտար երկիր պանդխտիկ,  
Այլ շուտով ես դառնամ.  
Դառնամ առ քեզ հայաստան  
Եւ հովիտք ծաղկաբույր.  
Ո՛հ, մէկ աւանդ սիրական  
Տուր ինձ, մայր, քու համբույր:  
Առաւ համբույրն ու գնաց.  
Այլ ՚ի տար աշխարհին  
Թռաւ արեւն իւր կենաց  
՚ի ծաղիկ հասակին:  
Հացէ՛ք, հայր իմ ու մայրիկ,  
Հաց, ո՛ կոյս, զի երթամ,  
Յօտար երկիր պանդխտիկ  
Մեռանիմ ես անժամ:

Մ. Պէշիկթաշեան.

Ե Ր Գ

Մինչև մահուն անյիշատակ ՚ի շիրիմ  
Մնամ քու սիրույդ ես հաւատարիմ.  
Կրնայ ըլլալ, որ դուն, աւանդ, մոռնաս զիս,  
Բայց ես հաստատ եմ միշտ իմ խոսամունքիս:  
Ով իմ հրեշտակ, յոյս իմ միակ նազելի,  
Քեզի կեանք ու բազմ բոլորն ալ տուի:  
Իմ մանկութեան տիոց դու սէր նախընծայ,  
Սիրտդ գերել ես միշտ փափաքեցայ:  
Սակայն ափսոս երջանկութեան այն փափուկ  
Մահուան ժանտ ձեռքով ըլլայ վաղանցուկ.  
Այս է վճիռ, զոր զրեց ճակտին մեր երկինք.  
Պէտք է իրարմէ անդարձ բաժնուինք:  
Սակայն իմ սիրտ քուկին սրտէդ անբաժան,  
Քեզմէ չ՛ղատուի մինչ ՚ի գերեզման.  
Սիրույս յետին բաղձանք յետին նշանակ՝  
Քու քովդ է հանգչել մահուան քարին տակ:  
Սոխակն երգել իւր զայլայլիկ գիշերին՝  
Նստի ՚ի վերայ մեր ցուրտ դամբանին,  
Մինչ երկուքնիս մենք ՚ի տեղույն այն դադար,  
Մահուան զրկաց մէջ ննչենք անդադար:  
Վկայ ըլլան աստեղք երկնից կամարաց,  
Զքեզ յաւիտեան սիրեմ անմոռաց.  
Զր դադարիմ պիտի երբէք ըսել քեզ՝  
Ես քուկդ եմ յաւերժ սիրով բոցակէզ:  
Ո՛հ, ի՞նչ ընեմ, ըսէ՛, սրտիս իմ հատոր.  
Սրիւնս կուզես՝ թո՛ղ վագէ բոլոր,

Բայց թէ անով ալ զոն չըլլաս, ո՞վ անդո՛ւթ,  
Կեանքս այս զոն կուտամ քու սիրոյդ:

Պիտի սիրես զիս չես մահուան, զիտե՛մ ես,  
Բայց անօգուտ տեղ արտասունքներ թափես՝  
Շիրմիս վրայ անմխիթար ողբալով  
Այս սիրելիդ, որ կորուսիր շուտով:

Թարգմ. Մ. Պէշիկթաշլեան.

### ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ.

Վերջին վարդ, վերջին վարդ,  
Սիրականիս վերջին զարդ.  
Նա քեզ հանեց իւր կրծից,  
Ինչ պարգևեց վերջին վարդ:  
Մանկութեան ոսկի ժամերն  
Անցել են անդառնալի,  
Կորած սիրոյս չիշատակ  
Դո՛ւ ես միայն, վերջին վարդ:

Գարնան օրերն անցել են,  
Տօթ ամառն է ինձ էրու՛մ,  
Միշտ սպասում եմ քու տեսքին,  
Դուն ամառուան վերջին վարդ:  
Երջանիկ կեանքիս օրերը  
Ցաւ են դառել առաջիս.  
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք  
Միտքս բերի՛ր, վերջին վարդ:

Շատ չի տեխի՛ կը բացուի  
Առաջիս սե գերեզման,

էս աշխարհից միայն քեզ  
չեսու կառնում. վերջին վարդ:

Գրմ. Ք. Պատկանեան.

### ՍՍՅԼՈՐԴ

Ահա սուրհանդակի սալակը՝  
Ուղիդ ճամբով է դուրս թռչում,  
Եւ վալդայի տխուր զանգակը  
Կամարի տակ է ղողանջում:

Արթուն սալորդս զիշերուան դէ՛մ  
Իւր վիճակի վրայ տխրեց  
Եւ սիրելնի աչաց կարօտը  
Նա տխրազին ձայնով երգեց:

«Կապո՛յտ աչեր, կապո՛յտ աչեր,  
Կտրձիս կեանքը մաշեցիք,  
Ինչո՛ւ, ինչո՛ւ, դուք չա՛ր ոսոխներ,  
Ինչո՛ւ սրտերս բաժնեցիր»:

Մնաս բարև, իմ տուն հօրական,  
Մնաս բարև, իմ սիրական,  
Ես կը հանդչիմ զինչ բոց կրակին  
Այս անբնակ դաշտի միջին»:

«Արեխ լոյսը խաւարել է,  
Այս աշխարհումն էլ որը եմ ես,  
Սրտիս կարօտը աղչկալ տեսնելիս  
Մինչև 'ի մահ զրկած եմ ես»:

Այս որ ասաց՝ շարժեց մտրակը,  
Երեք ձիանց մեջքին խփեց,

Իւր սիրելինի պարզ չիշատակը  
Այսպէս երգով նա փարատեց:

### Գ. ՕՐՕՐՆԵՐ.

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԽՍՂԱՑՆԵԼՈՒ ԵՐԳ.

Դանդան-դանդան դրնկօցիք,  
Մեղրով լիբը քթօցիկ,  
Դան էննք, դանդան էննք,  
Սե գառը մատաղ էննք,  
Միսն ուտենք, շորվեն խմենք,  
Օսկոռներ չարդախ էննք:  
Մենձ իրիցու բուրվառն ա,  
Պզտիկ յէրարոջ շուրջառն ա,  
Անուշ նանի բալիկն ա,  
Թառ քաւորի սանիկն ա.  
Գրկեր ա, տուն ա բերե,  
Զի գրցէ շունը կերե:  
Սարեր ըմէն բիար ա,  
Բալէս կանանչ խիար ա,  
Սարեր ըմէն ուսին ա,  
Բալէս բատրի լուսին ա.  
Սարեր ըմէն ապասի,  
Իձ բալին բան ձի' ասի:

Օ Ր Օ Ր

Ննչեա՛, որդեա՛կ, անուշ քնով,  
Օրօր կասեմ ու նանի,  
Քնոյ հրեշտակն իւր թևերով  
Քո երեսին հով կանի:

Օրօր, օրօր ի՞մ զաւակիս,  
Օրօր կասեմ հրեշտակիս:

Ննչեա՛-ննչեա՛, անուշ զաւակ,  
Շուտ մեծացիր ու մարդ դառ,  
Լեր պիտանի հայրենիքիդ,  
Հայրենիքիդ քո թշուառ:

Օրօր, օրօր... և այլն:

Գիտե՛ս արդեօք ո՞վ էր պապրդ,  
Եւ ի՞նչ գործեր նա արաւ.  
Նա իւր անմահ գործերովը  
Հայրենիքին փառք բերաւ:

Օրօր, օրօր... և այլն:

Քո անունն էլ նորա պէս է,  
Դու էլ նորան նմանիր,  
Նորա տուած օրինակով  
Հայրենիքիդ ծառայիր:

Օրօր, օրօր... և այլն:

Դէ՛հ, մեծացիր ու քաջացիր,  
Մեր տան վրայ մտածիր,  
Ձեռքէդ եկած ամեն բարիք  
Նրանից ձի' խնայիր:

## ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Արի՛, ի՞մ սոխակ, թո՞ղ պարտէզ, մէրին,  
Տաղերով քուն բեր աղիս աչերին.

Բայց նա լալիս է, դու, սոխակ, մի՛ գալ,  
Ի՞մ որդին չուզէ տիրացու դառնալ:

Ե՛կ, արեղածագ, թո՞ղ արտ ու արօտ,  
Օրօրէ՛ տղիս, քնի է կարօտ.

Բայց նա լալիս է, դու, ձագուկ, մի՛ գալ,  
Ի՞մ որդին չուզէ արեղայ դառնալ:

Թո՞ղ դու, տատրակի՛կ, քու ծագն ու բունը,  
Վուլփուլով աղիս բեր անուշ քունը.

Բայց նա լալիս է, տատրակի՛կ, մի՛ գալ,  
Ի՞մ որդին չուզէ սգաւոր դառնալ:

Կաչաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,  
Շահի զրուցով որդուս քունը բեր.

Բայց նա լալիս է. կաչաղակ, մի՛ գալ,  
Ի՞մ որդին չուզէ սովորաբար դառնալ:

Թո՞ղ որսդ, արի՛՝ քաջասիրտ բազէ,  
Քո՛ւ երզը զուցէ ի՞մ որդին կուզէ...

Բազէն որ եկաւ՝ որդիս լռեցաւ,  
Ռազմի երգերի ծայնով քնեցաւ:

Գամառ ֆաթիպա.

Ե. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

\* \* \*

Քու սէրդ ինձի կրակեց,  
Ջանս ծաշաւ ու բարակեց,  
Քեզ ինձ տալուն հակառակեց

Անխիղճ հէրդ, քեաֆիր մէրդ:

Ինձ սէրիդ դերի են արել,

Խելքս գլխէս առել տարել,

Հայրենիքից հեռու վարել՝

Անխիղճ հէրդ, քեաֆիր մէրդ:

Ջանս կրակով լցրեցին,

Ինձ այրեցին խորովեցին,

Քեզ ինձանից անշատեցին՝

Անխիղճ հէրդ, քեաֆիր մէրդ:

Ի՛նչ բայտան ցանէ հոգոյս,

Ո՛վ ի՞մ անուշիկ աչքի լոյս,

Ինձ քեզանից արին անյոյս՝

Անխիղճ հէրդ, քեաֆիր մէրդ:

Ուսերիս ցաւեր կը բառնան,

Թէ որ տուած խօսքից դառնան.

Ե՞րբ կը լինի, որ ինձ չմոռնան

Անխիղճ հէրդ, քեաֆիր մէրդ:

Գոնէ ինձի դու մի յոյս տուր,

Սիրտս մի՛ մխեր հատու սուր.

Ինձի խեղդում են առանց շուր՝

Անխիղճ հէրդ, քեաֆիր մէրդ:

Սիրահար սրտից խաբար չես,

Չես կարոյ մնալ առանց քեղ,

Միմեանցից բաժանում են մեզ՝

Անխիղճ հէրդ, քեաֆիր մէրդ:

Ա. Մեխիթարեան.

ԿԱՔԱՆԻ ԵՐԳ ՎԱՆԵՑՈՑ

Այ խորտիկ, խորտիկ,

Այ սիրունիկ կեաքեաւիկ:

Արև տէպաւ սարին վերէն,

Կեաքեաւն էլաւ իր բեօնէն,

Բարև արեց ծաղկրներէն,

Թաւաւ, էլաւ սարին վերէն:

Այ խորտիկ, խորտիկ և այլն:

Երբ կեաքէւուն ծայն կը լսեմ,

Երդիան 'ի վեր տիւս կ'երիշկեմ,

Կեաքեաւ կիւկեայ կրկրրալով,

Քեարին վերէն շորշորալով:

Այ խորտիկ և այլն:

Քեօ բեօն հինած ծաղկրներով,

Որհան, նարկիզ, նունուֆարով,

Քեօ տեղ լցուած է շաղերով,

Դիւ կը մայլիս անմահ հոտով:

Այ խորտիկ... և այլն:

ԱՐԱԲՅԻ ԵՐԳԸ

Սասունայ սար փչէ ուր հով,

Արև կշտէր բնցնի ամպով,

Չուր է՞ր քնիս երազներով.

Չարթի՛ր, լաօ, մունիմ ըրդի,

Ե քէ մունիմ, օգնէ խայուն:

Բորիկ երթամ Մարմառ-ըւմբէթ,

Եօթ-Անունն էղնի քօ խեա,

Քրդու արուն կաթա թրէզ:

Չարթի՛ր, լաօ, ... և այլն:

Բորիկ ոտքով չուր Աղթամար

Էրթամ չիլամ ըրդի խամար,

Քե խեա էղնի սուրբ Տիրամար:

Չարթի՛ր, լաօ, ... և այլն:

Քրդու դրհէն էղնի Պօղօս,

Խայու Խայրիկ քէ բարեխօս.

Թուրդի օրհնէ մըր Քիրիստոս:

Չարթի՛ր... և այլն:

Քրող տանի քուրդ Աբօյին,

Սպաններ է չոչ Ափօյին,

Իլլաչ մացեր Արաբօյին:

Չարթի՛ր... և այլն:

Չուր է՞ր մնալ էլու գուներ,

Էրթամ գտնիմ գիմ խեղճ գառներ,

Սուքեմ գիմ բաղչայի ծառեր:

Չարթի՛ր... և այլն:

Դէն իրիշկէ, գալող ո՞րն է,

Քաչ Արարօ բազդաւորն է,

Կարմիր իրիցանց զինուորն է:

Չարթի՛ր... և այլն:

Խեղճ Մշեցին մնաց լալով,

Հեռու երկրներ ման գալով,

Մեռաւ թուրքի պարտքը տալով:

Զարթի՛ր, լաօ... և այլն:  
Ոտքի՛ կայնի, կտրի՛ն Խերան,  
Զորքով զնա՛ առաջ ուրան,  
Սալաթ Մէյրու բաժին զուրբան:

Զարթի՛ր... և այլն:  
Սէֆիլ, շիւար մացած խայեր,  
էղած անտէր- բնակէր հաւքեր,  
Տէր, դու փրկէ՛, պահէ՛ արթուն:  
Զարթի՛ր, լաօ... և այլն:

### ԲԱՅԱԹԻՔ

Կապուտակ ծին նստել եմ,  
Արագին մօտացել եմ.  
Արան, ինձ մի ճամբայ տուր,  
Մասիսին կարօտցել եմ:  
Անի, Անի, ախ Անի,  
Քանդողիդ տունը քանդուի,  
Քեզ որ ազգը չպահէց՝  
Մէկ սուգ անողն ի՞նչ անի:

Ունիս բազում նահատակ,  
Պառկել են սև հողի տակ,  
Քեզ պէս քաղաք չէր լինի,  
Ափսոս, եղար աւերակ:  
Երեսդ բաց ու ետ տար,  
Երբ ուզենաս՝ հողիս ան.  
Թող մէկ հողդ, ախ, մտնեմ,

էն վախար սէրդ էլ ետ տար:  
Բազը մեզի հպածեց,  
Երկէ երկիր տարածեց,  
Մենք էլ մի երամ էինք,  
Դէպքը այսպէս հարուածեց:  
Տար էլ հաւին, աչ ուրուր,  
Աշխարքս դանակ ա ու սուր,  
Զօռ մարդի թուրն ա կտրում,  
Խեղճն ուր կորչի, ախ, ուր, ուր:

Ախ հայաստան, հայաստան,  
Մնացիր անդատաստան,  
Այլոց օթեան դառար,  
Ո՛ւր են քո Արամ, Տիգրան:  
Երկնքի կանանչ կարմիր,  
Աչ սիրուն կանանչ կարմիր,  
Լերդս ու թոքս չորցել է,  
Սար ու ձոր կանանչ կարմիր:

Ընկել եմ, ախ, սարէ սար,  
Դարման չունիմ, ոչ մի ծար,  
Ուղում եմ գամ քո ոտը,  
Առաջս ծով, սար է, սար:  
Կանանչ են, ախ, սար ու ձոր.  
Զէնս բարակ, սիրտս խոր  
Հողիս էլ տամ չես լսիլ,  
Ի՞նչ ես ընկել սար ու ծար:

## ԹԻՖԼԻՉԵՑՈՑ ԳԱՆԳԱՏԸ

Տեհար մէկը շլապայով,  
 Բաշած ձեռին շան կաշի,  
 Շուշի կտորն աչքերին,  
 Լուս ընկաւ քո առաջին:  
 Էսենց է, մօղա է, մօղա է, մօղա է:

Պետերբուրգումը միթոմ  
 Աւարտիլ է իր ուսում,  
 Փիլիսոփայ է, կօսիս,  
 Խուրը տրկէմէն է խօսում:  
 Էսենց է, մօղա է... և այլն:

Մէկ էլ տենում իս պուչը  
 Թռե է տալիս դայրաթով,  
 Կօսիս քուչի ալիլը  
 Վիռ է կալել փուտրաթով:  
 Էսենց է... և այլն:

Մէկ էլ տենիս բժիշկը՝  
 Իր վիզիթի փուղն առած,  
 Դեռ ինքն էլ տուն չի հասած,  
 Հիւանդն էլ յեղնէն մեռաւ:  
 Էսենց է... և այլն:

Մի ձեռը նա փքուելով  
 Ունի շալուարի չիբում,  
 Կտրատուելով միւս ձեռով  
 Իւղած մազիւրն է քօքում:  
 Էսենց է... և այլն:

Ու բերնուս ծխելով

Սատանայի բուրվառը,  
 Մէջքը կտրած կատուի պէս  
 Երբ չափում է բուլվարը:  
 Էսենց է, մօղա է... և այլն:

Մէկ էլ ոչխարի նման  
 Էղնէն կախիլ է դմակ,  
 Կօսիս դարբնի մեծ փուքսով  
 Փչած ըլին իր քամակ:  
 Էսենց է... և այլն:

Մի էն դամբի պէս գործած  
 Էրեսների էն քուղը,  
 Սապոկների ճռնոցը՝  
 Բանդում ին իմ բղուղը:  
 Էսենց է... և այլն:

Ձիմ կանացի, հախ Սատու,  
 Բարկութիւնը իմ սանձել:  
 Սկսում եմ վաչ տալով  
 Միւր կնանիքն անիծել:

\* \*

## ԹԻՖԼԻՉԻ ՔԷՑ

Թէ սիրում իս թամաշա,  
 Պրտիս տեհի քաղքումը  
 Ինչ ին անում համաշա  
 Մարդիկ իրանց բաղչումը:

Մալապատիկ ծառի տակ  
 Միւր լօթիքն ին նրստտել:

Տկճուրնիրն ու խելադէք  
 Իրանց բոլոր մօտ արել:  
 Մին մինի կինաց ին խմում՝  
 Մեռելոց ու կենդանեաց,  
 Մին մինի բողազն ին խրում  
 Շամփուրնիրով խորոված:  
 Հազար-փէշէն լի դինով՝  
 Կըլկըացնում, խմում ին,  
 Տիկը բռնած պինդ ձեռնով՝  
 Իսկի, ասիս, թողնում ի՞նչ:  
 Քաչալ գլուխ զուռնաչին  
 Հառալօ է որ փչում,  
 Տիմպլիպիտօն լըսողին  
 Ղուղն ու ահանջն է տանում:  
 Միր պատուելի քաղքցուն  
 Աչքը ճակատին է թրուել,  
 Բամաղին կպել լիզուն,  
 Էլ չի ուզում նա լռել:  
 Քաղքցու գոզալ քալին  
 Մարդիցը չեա չի մընում,  
 Ձեռին առած մինձ կովզին՝  
 Չօռ է տալի կախէթուն:  
 Դրըմփացնում է դահիրան  
 Իրա փափուկ մասնիրով,  
 Պար է գալի լեզդինկան  
 Աղունակի վուռնիրով:  
 Էստի՛ Կիկօն «Չուլօին»  
 Քնաթաթախ զրուում է,

Էնդի՛ Վանօն Չալօին  
 «Էրթի քալին» մըռում է:  
 Էս ին անում համաշա  
 Մարդիկ իրանց բաղչումը,  
 Թէ սիրում իս թամաշա,  
 Պրտիս ըլի քաղքու՛մը:

Գ. Բ.

ԽԱՆՈՒՄ ԷԻՍ. ՁԱՆ

Բերդիցը դուրս ելայ՝ Սլազեազ տեսայ,  
 Խանում էւա ջան,  
 Աբարան աչքերիս դուժան է դառել:  
 Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,  
 Լալով ողբալով, քեօջ ու բարխանով,  
 Խանում էւա ջան:  
 Ոչխարն էսդին կարծայ, էնդին գառները,  
 Խանում էւա ջան,  
 Կաննչցեր ա ծաղիկները, ծառները:  
 Դուն կեցիր... և այլն:  
 Առի էրթանը քու ման գալած արաերը,  
 Խանում էւա ջան.  
 Քեզի տեսայ՝ թաժացաւ իձ դարդերը:  
 Դուն կեցիր... և այլն:  
 Ձեռ ու ոտս կապին՝ բերդը դրեցին,  
 Խանում էւա ջան.  
 Չուխա, շալվար լալով տունը բերեցին:  
 Դուն կեցիր... և այլն:

Ես Աղէկն եմ, չամուրցի մէկ զիւան,  
Խանու՛մ էւա ջան,  
Տու՛թսաղ էղայ ըստուց չուրի էրեան:

## Դ Ա Ս Ի Թ Ա Ն

Հազար ինն հարիւր չորս թուականին  
Տաւրոսի լեռներում ժայթքեց նոր կրակ,  
Թնդացին լեռները Մայր-Հայաստանի,  
Փայլեց հերոսութեան կապույտ դրօշակ:

Բանտից ու կապանքից ազատուած ոմանք՝  
Անուանի Սասնոյ մէջ որոնեցին կեանք,  
Տեղական քաջերից գանելով չարգանք՝  
Հանդատանալ ուզեցին մէկ ժամանակ:

Հայ քաջերը աւելացան օր-օրի,  
Նրանց թիւը հասաւ մինչև հարիւրի,  
Ամենքն էլ միասիրտ ու միահոգի,  
Զինավարժութեան մէջ հմուտ, ընդունակ:

Զինուած ու պատրաստուած՝ ողջը ժրաշան,  
Ունէին հեռածիգ բանուկ հրացան,  
Երգում արին Սասնեցոց հետ միացան,  
Կազմեցին հայկական մի փոքրիկ բանակ:

Ռազմագէտ Անդրանիկը բազմաշահ՝  
Տղաւ կառավարիչ հայ զօրքին անահ,  
Զորս զլիսաւոր քաջեր ընտրեց թիկնապահ—  
Մուրադ, Հրայր, Վահան և սեպուհ Արշակ:  
Փոքրիկ ընդհարումներ եղան թէպէտև,  
Գործը չմեծացաւ, անցկացաւ թեթև,

Անձնապաշտպանութեան տուին կուռի ձև,  
Թուրքերու մէջ բարձրացաւ ճիչ, աղաղակ:

Այս լուրը սուլթանի ականջին հասաւ,  
Հայոց պատրիարքի վրայ նեղացաւ,  
Սպառնալով այսպէս հրաման տուաւ—  
«Խրատէ՛ հայերուդ, ուղարկէ՛ կոնզակ»:

Պատրիարքը պատասխանեց խոր հոգուց,  
Ասաւ.— «Ես ոչինչ եմ այսօր թէ կզուց,  
Հեղինակութիւնս ընկել է վաղուց.  
Գաղցր խօսքս նրանց թւում է ներհակ»:

Սուլթանը այլալուեց տխուր սրտմտած,  
Տակն ու վրայ եղաւ, ստատիկ ցաւ զգաց,  
Իւր նախարարներուն ասաւ բարկացած՝—  
«Բիթլիսի վալիին տալ հրովարտակ»:

Վալին տիրոջ հրովարտակը կարգաց,  
Հայերուն կոտորել հասկացաւ, զգաց,  
Առաքելոց վանքի վանահօրն ասաց՝—  
«Արի զնա՛ Սասուն, եղիր պատուիրակ,

«Գնա՛, խրատէ՛ բու հայ ժողովրդին,  
Վնաս չհասցնեն թուրքին ու բրդին.  
Ասա՛՝ չհետևին այլոց խորհրդին,  
Բոլորին կը շարգեմ, կանեմ շան-սատակ»:

Վարդապետը զնաց, դատարկ ետ դարձաւ.  
Նրա քարոզներուն մի լսող չեղաւ.  
Աձապարեց վալին, շատ զօրք մօտ արաւ՝  
Խառն 'ի խուռն քուրդ ու խուժան ելուզակ:

Մանր, խոշոր թնդանթներ մօտ բսան.  
Ռազմամթերքը առատ բաւական,

Թուրքաց զօրքի թիւը կը լինէր այսքան —  
Քսան հազար ծիաւոր ու հետեակ:

Առիւծ Գէորգ չառուշ, կայծակ և վահան՝  
Աւետիսի հեար հասան օղնութեան,  
Կանգնեցին թուրք զօրքի դէմը յանդիման՝  
Հայոց կտրիճները անվախ, համարձակ:

Վալին ասաւ Անդրանիկին. — «Ո՛վ տխմար,  
Անփորձ ճնճղուկի պէս թակարդը ընկար.  
Զգիտե՛ս ու՛մ դէմը ասպարէզ մտար.

Ես բազէ եմ, դու՛ մի չնչին կաշաղակ»:

Անդրանիկը ասաւ. «Հոտած խելքի ծոփ,  
Խօսքերդ բու զլխիդ կը բերեմ խռով,  
Բուրիդ, բարերարը կը հանեմ շուտով,  
Անեղիս մէջ կառնեմ քեզ որպէս բամբակ»:

Վալին ասաւ. — «Ազրայիլն եմ ես հիմա,  
Իսկապէս բու հոգիդ առնելու եկայ.  
Ո՛ւմ վրայ ես դրել յոյսդ, ինձ ասա՛,  
Ո՛վ դու ամբարտաւան, դու գո՞ղ, աւազակ»:

Անդրանիկը ասաւ. — «Շատ բարձրամիտ ես,  
Գիշակեր բորենի մէկ պարագիտ ես,  
Անգէն խեղճ հայերուն կոտորելի գիտես,  
Քաջերու մօտ դու կը դառնաս նապաստակ»:

Վալին ասաւ. — «Արի անձնատուր եղիր,  
Լսէ թագաւորիդ, գէնքերդ վար դիր,  
Ողջիդ կը դարձնեմ ես հող ու մոխիր,  
Անդադար մէկ ամիս կարձակեմ գնդակ»:

Անդրանիկը ասաւ. — «Լսի՛ր, ո՞վ փաշա,  
Մեզ համար մեռնի կայ, յանձնուելի չկայ,

Արա՛, մի խնայիր ձեռքէդ ինչ կու դայ՝  
Շատ ենք լսելի, տեսիլ մենք քամու առպրակ»:

Վալին ասաւ. — «Անգործ մի քանի լամուկի,  
Սրտեր էք պղտորում որպէս կեղտոտ մուկի,  
Զեղ նման խենթերու պատճառով չատուկի՝  
Դրախտ Անատոյը դարձաւ աւերակ»:

Անդրանիկը ասաւ. — «Մեզ հետ լաւ վարուիր,  
Եթէ շահիլ կուզես՝ ինքդ խոնարհուիր,  
Մինչև մեր պահանջը ճիշտ չկատարուի՝  
Մենք չենք դառնալ զահին հլու հպատակ»:

Վալին ասաւ. — «Ինձ չկարծես՝ մենակ եմ,  
Զօրք շատ ունեմ. ինչ անցքեր կան՝ կը փակեմ,  
Քսան թնդանթներ մէկէ՛ն կարձակեմ,  
Բոլոր խմբերովդ կանցնիս գեանի տակ»:

Անդրանիկը ասաւ. — «Ես պիտի կուռիմ,  
Հայրենիքիս սիրոյն համար թող մեռնիմ.  
Քու հրաղէնքերուդ դիմացը ունիմ  
Հրացայտ դորժիքներ, պալթող ուժանակ»:

Վալին տեսաւ՝ չեն խոնարհուում հայերը,  
Իրանք՝ անվախ և հատու են գէնքերը,  
Խրախուսեց, առաջ մղեց քրդերը,  
Բայց հայերուց կերան կատաղի ապտակ:

Զորս ամիս շարունակ պատերազմ եղաւ,  
Սար ու ձոր դղրդաց, դոռաց, թունդ ելաւ,  
Թուրքաց կողմից երկու հազար մարդ ընկաւ,  
Հայերը ունեցան քսան նահատակ:

Վալին փախաւ, զօրքն էլ իրան հետեւեց,  
Անարդուած, անպատիւ դէպի Մուշ չուեց,

Իշաւ դաշար, անդէն հայոց շարդ առւեց,  
 Տեսաւ՝ Սասնեցոց հետ չի լինի կատակ:  
 Հայերն էլ ղերբերը թողին հեռացան,  
 Որ թուրքերը անդէն հայոց շարդ շտան,  
 Յրուեցան ամենքը, մի տեղ պահուեցան,  
 Մինչև որ կրծադէ մի նոր արեղակ:  
 Հմուտ կտափարիչ, խելահաս փարպետ,  
 Մահացու կրակից նա չկեցաւ ետ,  
 Կեցցէ՛ Անդրանիկը, ընկերներու հետ  
 Բոլոր աշխարհի մէջ ստացան հաշակ:  
 Զիւան, ուժեղի մօտ եթէ խիղճ լինի,  
 Տկարին օղնելը դժուար չի թուի.  
 Տա՛յ Աստուած, որ հայոց թեխն էլ էրնուի  
 Անձրև չգայ, քամին փչէ չաջողակ:



**Ց Ա Ն Կ**

Նուէր Տիկին Իսկուհի Գրիստափօրեանի Երես.  
 Յիշատակին 7

**Ա. Տաղեր ու մաղթանքներ.**

Գանձ Վասն ննչեցելոց	Ներսէս Կլայեցի	13
Երգ ազօթական	Վ. Վ. Մանկունի	9
Մաղթանք սու Աստուած		14
Շարական ծննդեան		15
Տաղ ծննդեան		16
Օրհնութիւն Ազգային	Մ. Ե. Թաղեաթեանց	17

**Բ. Ազգային երգեր.**


Անի քաղաք	Աղէք. Վ. Արարատեան	19
Առաջին Տարեդարձ ազգային սահմանադր.		20
1861 թ. Մայիսի 24	Յ. Գ. Սվաճեան	
Արաքսի Արտասուքը	Ռ. Տ. Գ. Պատկանեան	23
Գարուն	Մ. Պէշիկթաշեան	26
Եզրայր եմք մեք	Մ. Պէշիկթաշեան	27
Երգ Արշակայ	Խ. Գալֆայեան	28
Երգ Հայրենի.	Մ. Պէշիկթաշեան	30

Երգ Մեծին Վարդանայ	Ռ. Սէտէֆանեան	31
Երգ Ուրախութեան		31
Երգ Պանդուխտ Պատանեկի	Գ. Դսդոխեան	33
Երգ Յաւազին		34
Թաղումն Բաջորդոյն	Մ. Պէշիկթաշլեան	35
Ի Շաւարշան Դաշտին Վրէժք	Հ. Ն. Ալիշան	36
Ի Միութիւն Հայոց	Գ. Ապտուլազ	54
Լուսին	Գամառ-Քաթիպա.	37
Մերունի Հայրենասէր	Ռ. Տ. Գ. Պատկանեան	38
Կիլիկիա		39
Հայաստան	Յ. Միրզա-Վանանդեցի	40
Հայ Մեռնիք	Խ. Վ. Գալֆայեան	41
Հայ աղջիկներ	Գէորգ Միրիմանեան	45
Հայոց Գինի	Ռ. Պատկանեան	46
Հայրենեաց ձայն		47
Հայրենիք	Ս. Հ. Ֆէլէկեան	48
Հայրենիք	Ա. Հայկ	49
Հայ Բաջորդի	Մ. Պէշիկթաշլեան	51
Մահ Բաջորդուոյն	Մ. Պէշիկթաշլեան	52
Մայրենի լեզու		53
Մտածութիւնք աղթամարայ ծովակի եզերքին	Յ. Մելիք-Յակոբեան	56
Մամիկոնեան մեծ Վահանի պատասխանը	Մ. Նալբանդեան	65
Շուշանիկ	Յ. Կարինեանց	57
Չեն Երջանիկ	Մ. Պէշիկթաշլեան	22
Պանդխտի երգ		57
Պանդխտի ողջոյնը		58
Պանդուխտ Հայն	Մ. Բուշուրէկեան	59

Պանդուխտ առ Կռունկն Վանեցի տիր. Մկրտիչ		61
Պրպուլն Աւարայրի	Հ. Ն. Ալիշան	62
Սահմանադրութեան երգ	Ս. Պ. Պ. Փափազեան	60
Վարդան Մամիկոնեանի երգը		63
	Ռ. Տ. Գ. Պատկանեան	63
	Մ. Տամատեան	67
Տալուորիկցի Կարիճ		
	Գ. Երգեր.	
	Խ. Արովեան	69
Աղասու երգը		70
Առ Սիրուհին	Ս. Շահազիզեան	71
Երազ	Մ. Նալբանդեան	72
Երգ Աղատութեան		74
Երգ Աղատութեան		74
Երգ	Թարգ Իտալ. Մ. Պէշիկթաշլեանի	74
Երգ Թարգ.	Մ. Պէշիկթաշլեան	79
Իտալացի Աղջկայ երգ	Մ. Նալբանդեան	75
Ինձ համար չէ	Ք. Պատկանեան	76
Ի տարածամ մահ Գաբրիէլի Երամեան Հիմ- նադիր Հեղինակի «Հայկական Քնար»-ի		
	Մ. Պէշիկթաշլեան	77
	Մ. Պէշիկթաշլեան	78
Մահ պանդխտի	Ք. Պատկանեան	80
Վերջին վարդ		81
Սայլորդ		
	Գ. Օրօրներ.	
		82
Մանուկների խաղացնելու երգ		82
Օրօր	Կ. Մամիկոնեան	83
Օրօրոցի երգ	Գամառ Քաթիպա	84

Ե. Ժողովրդական երգեր,

Արարոյի երգը		86
Բայաթիք	Պ. ժ. Խ.	88
Դասիթան		94
Թիֆլիզեցոց գանդանտը		90
Թիֆլիզի բէփ	Գ. Բ.	91
Խանուճ Էւա ջան		93
Կարաւի երգ Վանեցոց		86
Քու յերգ ինձի կրակեց	Ս. Ղ. Մխիթարեան	84



«Ազգային գրադարան»



NL0381719

73.269